Ազգ

Azg
armenian daily

29 ՄԱՐՏ 2001 ՀԻՆԳՇԱԲԹԻ 57 (2261)

Բաքուն կողմնորոշման ճանապարհին

ԵՐԵՎԱՆ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մինչ Հեյդար Ալիեւի որդին հայտարարություններ է անում Ադրբեջանում ՆԱՏՕ-ի բազաների տեղակայման դեմ, Թուրքիան ակտիվորեն ենթարկում է նման հնարավորությունը: «Turkish Daily News»-ը հիշեցնում է, որ մարտի 23-ին Ադրբեջանի պաշտպանության նախարար Սաֆար Աբիեւը, իսկ հաջորդ օրը արտգործնախարար Վիլայաթ Գուլիեւը հայտարարել են, որ Ադրբեջանը պետք է ուժեղացնի երկրի անվտանգությունը եւ իր տարածքում տեղակայի ՆԱՏՕ-ի կամ Թուրքիայի ռազմական բազաները: Սաֆար Աբիեւը ԱՄՆ-ում ռազմական իր գործընկերների հետ հանդիպման ժամանակ համոզմունք է հայտնել, որ Հարավային Կովկասում ՆԱՏՕ-ի բազաների առկայությունը տարածաշրջանի կայունության գլխավոր գործոնը կդառնար եւ կսթափեցներ տարածաշրջանի կայունությանը սպառնացող երկրներին:

Չգտնելով ամրացնել իր կաղերը Հյուսիս-արեւելյան բլոկի հետ, շարունակում է թերը, Ադրբեջանն արդեն ակնարկել է, որ Բաքուն կողջուներ նրա ավելի ակտիվ դերը Կովկասում: Բաքուն դեռ 1999-ին է հայտարարել ՆԱՏՕ-ին հյուրընկալելու իր ցանկության մասին: Ադրբեջանը ՆԱՏՕ-ի անդամ չէ, բայց մտածում է դաշինքի հետ կաղերը ամրացնելու մասին, նշում է «Turkish Daily News»-ը:

ԱԶԳԱՅԻՆ

Փորձություն

ՌՈՒԲԵՆ ՄԻՐՋԱԽԱՆՅԱՆ

Երեք տարի առաջ, 1998 թ. մարտի 30-ին Հայաստանի Հանրապետության նախագահ ընտրվեց Ռոբերտ Քոչարյանը: Անցած երեք տարիները շատերը կփորձեն որակավորել որպես հույսերի (ոմանք արդարացված, ուրիշներ՝ ոչ), իսկ ոմանք ազգային հիմնարար խնդիրների հետապնդման ժամանակահատված, երրորդ խումբը կառանձնացնի խորհրդարանում տեղի ունեցած ոճրագործությունը՝ վերջին տարիների քաղաքական ընթացքը բաժանելով մինչեւ հոկտեմբերի 27-ը եւ 27-ից հետո: Մենք Քոչարյանի նախագահության տարիները կբնորոշենք որպես աննախադեպ փորձությունների շրջան: Նախ եւ առաջ դեռեւս 1992 թ. գաղթականության ճանապարհը բռնած, ընչազուրկ ժողովրդի լայն զանգվածների, ոչնահարված ժողովրդավարության եւ ձեւավորվող քաղաքական համակարգի, հումանիտար աղետ արձանագրող մտավորականության եւ գրեթե ոչնչացված տնտեսություն ժառանգած, երկիր ղեկավարելու պատասխանատվություն նախագահի համար:

Նախկին եւ ներկա

Քոչարյանի նախագահական ընտրություններից անմիջապես հետո ուժգնությամբ հարց է բարձրացվում նախկին իշխանություններին քաղաքական գնահատականի արժանացնելու մասին: Այդ խնդրով առավել հետեւողական դիրքորոշում են հանդես բերում այն կուսակցությունները, որոնք Տեր-Պետրոսյանի օրոք ընդդիմադիր էին, իսկ նախագահական ընտրությունների ընթացքում պաշտպանում էին Ռոբերտ Քոչարյանին:

Տես էջ 4

ՀԱՅ-ՎՐԱՑԱԿԱՆ

Հարաբերություններում պարադոքսալ վիճակ է

Արտգործնախարար Մենաղարիշվիլիի մեկօրյա այցը Երեւան

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Բացի նրանից, որ հայ եւ վրաց ժողովուրդները հարեւաններ, ավանդական բարեկամներ են, երկու պետությունների՝ Հայաստանի եւ Վրաստանի միջեւ վերջին 10 տարիներին կուտակվել են բազմաթիվ հրատապ լուծում պահանջվող հարցեր: Հարեւան հանրապետությունում ունենք 400 հազարանոց սփյուռք, որին ճիշտ ուղղորդելու դեպքում միայն կարող ենք ակնկալել ամուր, փոխշահավետ կապեր Երեւանի եւ Թբիլիսիի միջեւ: Միեւնույն ժամանակ վիրահայությունն արտաքին միջամտության դեպքում կարող է զոհ, աղակայունության գործոն դառնալ մեր առանց այն էլ անհանգիստ տարածաշրջանում: Այո, խոսքը Ջավախքի մասին է, մի հիմնախնդրի, որի մասին լռելը չափազանց վտանգավոր է, որի մասին հաճախ է խոսվում Վրաստանի անվտանգության խորհրդի նիստերում:

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ

Հարգ. Վրաստանի արտգործնախարար Իրակլի Մենաղարիշվիլիին. «Հայ-վրացական հարաբերություններում ե՞րբ կարող ենք սպասել իրական եւ առավել կառուցողական առաջընթաց, մասնավորապես Սամցխե-Ջավախեթիի սոցիալ-տնտեսական իրավիճակի բարելավման առումով»:

Տես էջ 2

Ջորջ Բուշը հիշում է հայերին տված խոստումը

ՉԻԿԱԳՈ, 28 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՈՊԱՆ: Մարտի 27-ին Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի (ԱՀԴՀ) Իլինոյսի նահանգի տարածաշրջանային ներկայացուցչությունը տարածել է հաղորդագրություն ԱՄՆ նախագահ Ջորջ Բուշի Չիկագո կատարած այցի մասին: Իր ուղեւորության ընթացքում, որի նպատակն է զորակցել 1,3 մլրդ. դոլարով ԱՄՆ բյուջեի հարկային փաթեթի կրճատման վերաբերյալ նախագահական նախաձեռնությանը, նախագահ Բուշը այցելել է Չիկագոյի առեւտրական բորսա: ԱՀԴՀ տարածաշրջանային ստորաբաժանման անդամներ (Իլինոյսի նահանգից) Հակոբ Սուլթանյանը եւ Սեւան Լաֆրանը դիմել են նախագահ Բուշին՝ Հայոց ցեղասպանության հարցի նկատմամբ նրա դիրքորոշումը ճշտելու խնդրանքով: Ի պատասխան Սուլթանյանի խնդրանքին, ԱՄՆ նախագահը, մասնավորապես, հայտարարել է. «Հայերը մեծ ժողովուրդ են: Դուք գիտեք, ես մինչեւ ընտրությունները խոստում եմ տվել ձեզ»: Ջորջ Բուշը հիշեցրել է ԱՄՆ հայ համայնքին հաստատված իր ուղերձը, որ հրապարակվել էր իր ընտրարշավի ընթացքում, ավելացնելով. «Մենք մտադիր ենք հոգալ հայերի մասին»:

Հիշեցնենք, որ իր նախընտրական ուղերձում Ջորջ Բուշը 1915 թվականի իրադարձությունները որակել էր որպես «ցեղասպանական կամպանիա» ('a genocidal campaign') եւ խոստացել «ամեն ինչ անել, որպեսզի Ամերիկայի ժողովուրդն արժանի ձեւով ճանաչի հայ ժողովրդի ողբերգական տառապանքների փաստը» (George W. Bush 2-19-2000): Նման ձեւակերպումը էականորեն տարբերվում էր այդ հարցի առնչությամբ մյուս թեկնածուի՝ Ալբերտ Գորի դիրքորոշումից, որը ամեն կերպ խուսափում էր «ցեղասպանություն» բառից:

Կադրային փոփոխություններ Ռուսաստանի ուժային կառույցներում

ՄՈՍԿՎԱ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինն այսօր մի շարք կադրային փոփոխություններ կատարեց ուժային կառույցներում: Պաշտպանության նոր նախարար է նշանակվել Սերգեյ Իվանովը, ներքին գործերի նախարար՝ Բորիս Գրիզլովը, ՌԴ անվտանգության խորհրդի քարտուղար՝ Վլադիմիր Ռուշայլոն:

«Եկել է կադրային փոփոխությունների ժամանակը, ինչը պետք է ռազմական կառույցի արդիականացման տրամաբանական ավարտը դառնա», հայտարարել է Վլադիմիր Պուտինը, հայտնելով իր որոշումների մասին: Նա նաեւ նշել է, որ նոր կադրային նշանակումները կատարված են Հյուսիսային Կովկասում, մասնավորապես Չեչնիայում իրավիճակի փոփոխման հետ:

Այսօր կատարված կադրային փոփոխությունների թվում Լյուբով Կուդելինան նշանակվել է ՌԴ պաշտպանության փոխնախարարի պաշտոնում: Մինչ այդ նա զբաղեցնում էր ֆինանսների փոխնախարարի պաշտոնը: Պաշտպանության փոխնախարար է նշանակվել նաեւ Մոսկվայի զինվորական օկրուգի հրամանատար գեներալ-գնդապետ Իգոր Պուզանովը:

Պաշտպանության նախկին նախարար Իգոր Սերգեեւն ափսոսանքի է անցնում ՌԴ նախագահի վարչակազմում: Նա կգլխավորի վարչություններից մեկը եւ կղեկավարի այն գերատեսչությունների ու նախարարությունների ափսոսանքը, որոնք զբաղվում են ռազմավարական կայունությամբ:

Այսօր Վլադիմիր Պուտինը նշանակել է ցամաքային եւ տիեզերական զորքերի նոր հրամանատարներ:

ՌԴ հարկային ոստիկանության դաշնային ծառայության ղեկավար է նշանակվել Միխայիլ Ֆրադկովը, որն այդ պաշտոնում փոխարինել է Վյաչեսլավ Սուլտագանովին:

Միաժամանակ Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը բավարարել է ատոմային էներգիայի նախարար Եվգենի Ադամովի հրաժարականի խնդրանքը: Այդ պաշտոնում նշանակվել է Կուրչատովի ինստիտուտի տնօրեն Ալեքսանդր Ռումյանցեւը:

ՕՈՒԵՅՍ ՍԱԱԴԱԹԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ԱԳՄ-Ի ՀԵՏ

«Մակրոտնտեսական ցուցանիշները գերազանց են, բայց ինչո՞ւ ժողովրդի վիճակը չի լավանում»

Համաշխարհային բանկը դեռին խարս է ցույց տալիս ՀՀ կառավարությանը

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

Երեկ ՀՀ արդյունաբերողների ու գործարարների միությունը հյուրընկալեց ՀՀ-ում Համաշխարհային բանկի երեւանյան գրասենյակի տնօրեն Օուեյս Սաադաթին: Դատելով ըստ ամենայնի, հանդիպումը առանձնահատուկ էր ու կոնֆիդենցիալ, որի սկզբին մամուլին բախտ վիճակվեց ներկա գտնվել, իսկ երկրորդ կեսին, չնայած ՀԱԳՄ նախագահ Արսեն Դաբաղյանը նշեց, որ մամուլից թաքցնելու բան չունեն, լրագրողները դուրս հրավիրվեցին: Սակայն դատելով մինչ այդ ՀԲ ներկայացուցչի ելույթից, կարելի էր ենթադրել հանդիպման երկրորդ՝ կարեւոր կեսի խոսակցության առարկան ու թեման: Ամեն ինչից պարզ է, ՀԲ-ն այնքան էլ գոհ չէ ՀՀ կառավարության վարած քաղաքականությունից՝ Հայաստանում մասնավոր հատվածի պաշտպանության ու ներդրումային միջավայրի բարելավման իմաստով, ու թեեւ ՀԲ ներկայացուցիչը բացահայտ ոչինչ չասաց, բայց նրա խոսքի տրամաբանությունից երեւում էր, որ բանկը ունի որոշ մտահոգություններ որոշ կառույցների ափսոսանքի հետ կապված, օրինակ՝ վերջերս ստեղծված Գործարարության աջակցության խորհրդի (որից, ի դեպ, իր դժգոհությունն էր արտահայտել նաեւ ՀԱԳՄ-ն, ներկայացնելով խորհրդում գործարար-անդամների մասնակցության վերաբերյալ իր գործնական առաջարկությունը-Գ. Մ.) եւ Զարգացման հայկական գործակալության (ԶՀԳ) վերաբերյալ: Մի խոսքով՝ գործարարներն ու ՀԲ ներկայացուցիչը խոսելու ընդհանուր թեմա ունեին....

Տես էջ 3



Գերմանիան կիեւեւի՞ Ֆրանսիային

ԵՐԵՎԱՆ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Հայերը ողջ աշխարհում կրկին գրոհի են անցել Թուրքիայի դեմ՝ Հայոց ցեղասպանության ընդունումը գլոբալ խնդիր դարձնելով: Մինչ ԱՄՆ-ի Մերիլենդ նահանգի սենատում հայկական բանաձեւը ընդունելիս հայերի վրա մեծ ճնշում գործադրվեց, նրանք Գերմանիայում հսկայական աշխատանք են ծավալել հայանպաստ հասարակական կարծիք ձեւավորելու համար», նշում է «Turkish Daily News»-ը: Թուրքիան թեեւ սկսել է լրջորեն ակտիվացնել իր ջանքերը հայերի ցեղասպանության ընդունման պահանջների դեմ, սակայն դրանք շատ չնչին են թվում հայերի ակտիվության դիմաց:

Թուրքական Անատոլու գործակալությունը տեղեկացնում է, որ Armenian Research Foundation-ի նախագահ, դեսպան Օմեր Լյութենը Գերմանիայի Դորտմունդ քաղաքում տեղի ունեցած կոնֆերանսի ժամանակ հայտարարել է, որ Գերմանիայի հայությունը իր ողջ ջանքերն ուղղել է մի նպատակի՝ ազդել խորհրդարանի վրա եւ հասնել հայկական բանաձեւի ընդունմանը:

ՐՈՒԹԱԳԻԿ

ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ

Ընտրվեց ՀՈՒԱԿ Վանաձորի նորաբաց մասնաճյուղի ղեկավարությունը

Օրերս Հայաստանի Ռամկավար ազատական կուսակցության Վանաձորի մասնաճյուղ էին ժամանել ՀՈՒԱԿ ատենապետ Ռուբեն Միրզախանյանը, ատենադպիր Գառնիկ Հովակիմյանը, Հանրապետական վարչության անդամ Գագիկ Վարդանյանը: Կուսակցության հնագույն անդամներից մեկը՝ Վարդես Քեչիշյանը, ներկայացրեց հյուրերին: Ռուբեն Միրզախանյանը խոսեց ապրիլի 6-8-ը Աթենքում կայանալիք 22-րդ պատգամավորական ժողովի կարեւորության մասին՝ հույս հայտնելով, որ կմիավորվեն արդեն 5 տարի տարանջատված Լիբանանի եւ ԱՄՆ-ի ռամկավարները, որից հետո ավելի կսերտանան հարաբերությունները ՀՈՒԱԿ-ի հետ: Նա խոսեց նաեւ Հայաստանում սեփականաշնորհման ոլորտում առկա թերությունների, մասնավոր տնտեսությունում մենաշնորհումը բացառելու անհրաժեշտության մասին: Տեղի ունեցավ նաեւ ՀՈՒԱԿ Վանաձորի մասնաճյուղի 7 մարդուց բաղկացած վարչության ընտրություն: Ատենապետ ընտրվեց Հովիկ Աշչյանը, ատենադպիր՝ Ռադիկ Սաֆամյանը, գանձապահ՝ Սուկուչ Քոչինյանը:

ՀՈՒԱԿ Վանաձորի մասնաճյուղը գործում է Տիգրան Մեծի 8 հասցեում:

ՄԱՆՎԵԼ ՄԻԿՈՅԱՆ

ԿՈՆՖԵՐԱՆՍ

Բանակ եւ հասարակություն

ՀՀ պաշտպանության նախարարությունում մարտի 27-28-ը տեղի ունեցավ «Բանակ եւ հասարակություն» թեմայով հանրապետական գիտագործնական կոնֆերանս, որին մասնակցեցին ՀՀ պաշտպանության նախարարի առաջին տեղակալ, ԶՈՒ գնդ պետ Միխայել Հարությունյանը, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ, գեներալ-մայոր Միխայել Գրիգորյանը, ԶՈՒ անձնակազմի հետ տարվող գաղափարադաստիարակչական աշխատանքների գծով պատասխանատու սպաներ, ինչպես նաեւ ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի մի շարք ինստիտուտների, բուհերի գիտնականներ եւ գիտաշխատողներ, ստեղծագործական միությունների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

ՀՀ ՊՆ-ի նախաձեռնությամբ կազմակերպված կոնֆերանսի ընթացքում մանրամասնորեն քննարկվեցին բանակ-հասարակություն կապի գրեթե բոլոր դրվագները (եկեղեցի-բանակ, դպրոց-բանակ, ազգային փոքրամասնություններ-բանակ, արվեստ-բանակ, մամուլ-բանակ եւ այլն), մասնանշվեցին այդ կապի բացթողումներն ու դրանց վերացման ուղիները:

Շեշտելով բանակ-հասարակություն կապի սերտացման կարեւորությունը ելույթ ունեցողները միահամուռ այն կարծիքն արտահայտեցին, որ դա անհրաժեշտ է ՀՀ ԶՈՒ մարտական պատրաստակամության ու կարգապահության բարձրացման, բարոյահոգեբանական հատկանիշների եւ ազգային արժեքների դաստիարակման, ինչպես նաեւ ռազմական գործողությունների վերսկսման դեպքում հայոց բանակին զորավիգ լինելու առումով:

ՀՀ ՊՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՐՈԶՉՈՒԹՅԱՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋՊԵՏԱԿԱՆ

Հայ-վրացական հարաբերություններում պարադոքսալ վիճակ է

Սկիզբը էջ 1

Պատասխան. «Այս հարցում շնորհակալ ենք մեր հայ գործընկերներին, որոնք մեզ շատ լավ են հասկանում: Սամցխե-Ջավախեթիի իրավիճակը լիովին արտացոլում է ողջ Վրաստանի խնդիրները: Բարելավումը պետք է լինի երկկողմանի: Ինչպես գիտեք, Վրաստանի կառավարությունը Ջավախեթիի զարգացման համար մշակել է երկարաժամկետ նախագիծ, որպեսզի արագացվի տնտեսական իրավիճակի բարելավումը: Այս տարածաշրջանը չափազանց զգայուն է, եւ մենք համատեղ ուժերով պետք է լուծենք առկա խնդիրները»:

Ջավախքը լոկ աշխարհագրական տարածք չէ: Սա միակ ճանապարհն է, իսկ թե շատ անվտանգ, որը Հայաստանը կապում է մեր ռազմական դաշնակից Ռուսաստանին, ելք է դեպի Սեւ ծովի ջրեր: Գերազանցապես հայերով բնակեցված Ջավախքը սահմանակից է Հայաստանի ավանդական թշնամի Թուրքիային, կապում է Վրաստանին եւ Թուրքիային, որոնց հարաբերությունները ռազմավարական դաշնակցության վերածվելու միտումներ ունեն: Այս ամենին գումարվում է ռուսական գործոնը. Ախալքալաքում է տեղակայված 62-րդ ռուսական հանգրվանը, որը Մոսկվա-Թբիլիսի հարաբերություններում վերածվել է քաղաքական յուրահատուկ սակարկությունների: Ռազմակայանի լինել-չլինելը ուղղակիորեն կապված է Ջավախքի սոցիալ-տնտեսական իրավիճակի հետ. այս ռազմահանգրվանում աշխատանք ունեն մի քանի հարյուր տեղացի հայ ընտանիքներ: Ի դեպ, 62-րդ հանգրվանի շուրջ հարց ուղղվեց արտգործնախարար Մենաղարիբովիլիին, որը երեկ Երեւան կատարած մեկօրյա այցի շրջանակներում հանդիպել է նախագահ Քոչարյանին, վարչապետ Մարգարյանին, Վեհափառ հայրապետին, իր պաշտոնակից Օսկանյանին: Հարցը հնչեց անուղղակի. հնարավո՞ր է Վրաստանի եւ Ադրբեջանի տարածքում տեղակայվեն ՆԱՏՕ-ի ուժեր: «Դուք ինձ հարցնում եք մեկնաբանել միանգամայն անհիմն լուրեր: Մենք զբաղվում ենք Վրաստանի տարածքից ռուսական զորակազմի դուրսբերման խնդիրներով, եւ խոսք չի գնում այլ ուժերի տեղակայման վերաբերյալ: Ինչ վերաբերում է Ադրբեջանին, ապա Վրաստանը չի կարող որեւէ երկրի՝ վերջինիս տարածքում հնարավոր ռազմակայաններ տեղակայման որոնմանը միջամտել», ասաց պրն Մենաղարիբովիլին, ակնարկելով, թե Վրաստանը կողմ է տարածաշրջանի երկրների միջեւ առկա տարաձայնությունները չխորացնելու միտումներին: Պաշտոնական Թբիլիսին տարբեր մակարդակներով արել է հայտարարություններ՝ իր մտահոգություններն արտահայտելով Հայաստանում ռուսական ռազմակայանի առկայությանը: Կարելի է ասել, որ Ջավախքի խնդրից հետո հայ-վրացական հարաբերություններում երկրորդ խոչընդոտը Ռուսաստանի հետ հարաբերություններում պաշտոնական Երեւանի եւ Թբիլիսիի տեսակետների հակասություններն են: Հայաստանում չեն ողջունվում Վրաստան-Ռուսաստան լարված, Վրաստան-Թուրքիա բարեկամական կապերը, ընդհակառակը՝ վրացիները խանդով են վերաբերվում հայ-ռուսական ռազմավարական հարաբերություններին: Գրեթե նույնն է պատկերը Հարավային Կովկասում առկա հակամարտությունների առումով. հայերս «ընբռնումով ենք» մոտենում Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ինքնիշխանության ձգտումներին, երբեմն կարծում, թե նույն վերաբերմունքը պետք է ունենան վրացիները Լեռնային Ղարաբաղի խնդրին:

Հակասություններ կան նաեւ տնտեսական ոլորտում. Վրաստանը Հայաստանին պարտք է շուրջ 25 մլն դոլար, հիմնականում էներգակիրների դիմաց եւ չի պատրաստվում վճարել, քանի որ գանձարանը դատարկ է: Արտգործնախարար Մենաղարիբովիլին հույս հայտնեց, թե այդ խնդիրը մոտ ապագայում լուծում կունենա: Թերեւս 25 մլն պարտքին մենք նորմալ վերաբերվեինք (անշուշտ, մեր երկրի գանձարանն էլ է դատարկ), եթե խավարի մեջ թաղված Վրաստանը Հայաստանից գնած էլեկտրաէներգիան չվաճառեր Թուրքիային՝ այս ճանապարհով մարելով թուրքական կողմին իր շուրջ 50 մլն դոլար պարտքի մի մասը:

Մեզ մնում է հուսալ, որ պրն Մենաղարիբովիլու այցը, որի ընթացքում ոչ մի փաստաթուղթ չի ստորագրվել, լոկ արձանագրային չի լինի, իսկ հայ-վրացական հարաբերությունները գոնե այսօրվանից կընթանան վերընթաց ուղիով:

Երեւանում կկառուցվի նոր փողոց

ԵՐԵՎԱՆ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Վերջին 11 տարիների ընթացքում առաջին անգամ Երեւան քաղաքում նոր փողոց է կառուցվելու՝ Անիի տուֆից շենքերով: Ինչպես այսօր լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարեց Երեւանի գլխավոր ճարտարապետ Նարեկ Սարգսյանը, երկու օր հետո կսկսվեն շինարարական աշխատանքները, եւ վեց ամիս անց Երեւանը կունենա նոր փողոց: Մայրաքաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված՝ փոխադրամիջոցների միակողմանի երթեւեկությամբ, այս ճանապարհը կձգվի ներկայիս Բեյրութի փողոցին զուգահեռ եւ կմիացնի Մյասնիկյան եւ Շահումյան հրապարակները:

Ըստ գլխավոր ճարտարապետի, շինարարության համար տարածը կօգտագործվի օպտիմալ ձեւով, «կգոհաբերվեն 26 կոմիսարների անվան այգու 100-150 տարեկան ընդամենը 10-11 ոչ արժեքավոր ծառեր»:

141 մլն 230 հազար դրամ նախագծային արժողությամբ ճանապարհի կառուցապատումը ֆինանսավորելու է «Rengo» իտալական ընկերությունը:

Հայաստանի մայրաքաղաքն այսօր ունի մոտ 180 փողոց:

Իրավապահներն Իջեւանում անառականոց են հայտնաբերել

ՏԱՎՈՒՇ, 28 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Իջեւանում ձերբակալվել է քաղաքի 50-ամյա բնակիչ, ոչ մի տեղ չաշխատող, նախկինում խարդախության համար դատապարտված Մելսիկ Մխիթարյանը, որը հայտնի է «Ֆանտոմաս» մականունով: Նա մեղադրվում է այն բանում, որ հավաքագրել է 6-7 թեթեւաբարո կանանց եւ կազմակերպել նրանց հանդիպումները արկածների սիրահար տղամարդկանց հետ: Կանանց «ծառայությունների» վարձը կազմել է 500-5000 դրամ:

Ինչպես «Նոյյան տապանի» թղթակցին տեղեկացրեց Տավուշի մարզի դատախազ Էդուարդ Անդրիկյանը, Մելսիկ Մխիթարյանի նկատմամբ քրեական գործ է հարուցվել ՀՀ ՔՕ 226 (որջեր պահելը եւ կավատություն) եւ 112 պրիմ (բռնի կերպով սեքսուալ բնույթի գործողություններ կատարելը) հոդվածներով:

Բագրատաշենի մախսակետում ուժեղացվել է անասնաբուժական հսկողությունը

ԵՐԵՎԱՆ, 28 ՄԱՐՏ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Եվրոպայում դաբաղի համաճարակի հետ կապված վերջին շրջանում ուժեղացվել է անասնաբուժական հսկողությունը հայ-վրացական սահմանի Բագրատաշենի մախսակետի հատվածում: Մանրազնին ստուգվում են հանրապետություն մտնող բոլոր ավտոմեքենաները: ՀՀ գյուղատնտեսության նախարարության Անասնաբուժական վարչությունից ստացած հրահանգի համաձայն արգելվել է Ֆրանսիայից եւ Մեծ Բրիտանիայից բոլոր տեսակի մսամթերքների ներկրումը:

ԼԱՅԵՐԱՅԻՆ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

Հայաստանում ակնոց կրողները կդակասեն

Համենայն դեպս, «էֆիմել» լազերային վիրահատության շնորհիվ աշխարհի բազմաթիվ երկրներում վատ տեսողություն ունեցող շատ մարդիկ դադարել են ակնոց կրել: Այս մեթոդով վիրահատությունները 1-2 ամիս հետո կսկսվեն կատարվել նաեւ Հայաստանում: Այդ նպատակով գերմանական «էքսկուլաս մեդիկեյ» ընկերությունից ձեռք է բերվել եւ առողջապահության նախարարության 4-րդ վարչության հիվանդանոցում է տեղադրվել այն սարքը, որի միջոցով իրականացվում է վիրահատությունը: Աստիգմատիզմ, հեռատեսություն, կարճատեսություն, եղջերաթաղանթի այլ վիրահատություններ, որոնք ԱՄՆ-ում արժեն 4,5 հազ. դոլար (1 աչքը), Ռուսաստանում՝ 400-600 դոլար, Հայաստանում կարժենան 250 դոլար: Նախնական ժամանակաշրջանում վիրահատությունը կկատարեն եւ տեղի մասնագետներին կվերապատրաստեն գերմանացի բժիշկները: Նշենք նաեւ, որ այս մեթոդը բարձր գնահատականի է արժանացել աչքի վիրաբույժների կողմից եւ կիրառվում է աշխարհի ավելի քան 50 երկրներում:

Ա. Մ.

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Ժողովներ Մայր աթոռ Սբ. Էջմիածնում

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍԲ. ԷՋՄԻԱԾԻՆ, ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳ: Մարտի 27-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսի բարձր նախագահությամբ Մայր աթոռ Սբ. Էջմիածնում սկսվեց Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի եկեղեցական հանձնախմբի գործադիր վարչության հերթական նիստը:

Նորին Սրբությունը բարձրորեն գնահատեց գործադիր մարմնի ջանքերը՝ ուղղված հոբելյանական տոնակատարությունների կազմակերպմանը, շեշտելով, որ 1700-ամյակը լավագույնս պետք է օգտագործվի հոգեւոր նորոգության եւ հոգեւոր կյանքի վերարթնության համար, նշելով նաեւ, որ դրանք պետք է լինեն առավել ընդգրկուն եւ համակարգված: Որպես այդպիսի միջոցառում կարող է դառնալ մարտի 31-ին Արարատի մարզի գյուղերի օրհնության արարողությունը, որ թեմական առաջնորդների եւ հոգեւորականների օրհնությամբ կշարունակվի նաեւ մյուս թեմերում եւ մարզերում:

Վեհափառ Հայրապետը միաժամանակ որոշ մտահոգություններ հայտնեց: Մասնավորապես անդրադառնալով հրատարակչական ծրագրերին, Նորին Սրբությունը հորդորեց առավել բծախնդիր մոտեցում ցուցաբերել հրատարակվող գրքերի ընտրության հարցում:

1700-ամյակի գրասենյակի վարիչ-քարտուղար Տ. Հովնան արք. Տերտերյանը ներկայացրեց 1700-ամյակին նվիրված առաջիկա ծրագրերն ու միջոցառումները Հայաստանում եւ Հայաստանից դուրս: Առանձնակի կարեւորվեցին երիտասարդական ուխտագնացությունների եւ երեխաների հոգեւոր դաստիարակության ծրագրերը:

Տ. Վազգեն արք. Հովսեփյանի եւ Տ. Մեսրոպ արք. Գրիգորյանի ատենապետությամբ ժողովն իր աշխատանքը շարունակեց մարտի 28-ին:

Մարտի 27-ին Մայր աթոռ Սբ. Էջմիածնում իր աշխատանքն սկսեց եկեղեցիների համաշխարհային խորհրդի հայաստանյան կլոր սեղանի ղեկավարների տարեկան ժողովը: Նիստից առաջ կլոր սեղանի մասնակիցներին ընդունեց եւ արդյունավետ աշխատանք մաղթեց Գարեգին Բ Ամենայն հայոց կաթողիկոսը:

Կարեւորելով միջեկեղեցական հարաբերությունների անհրաժեշտությունը, Նորին Սրբությունը ուրախությամբ նշեց, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակման 1700-ամյակի տոնակատարություններին իրենց մասնակցությունը կբերեն նաեւ քույր եկեղեցիների ներկայացուցիչները:

Կլոր սեղանը եռօրյա նիստերի ընթացքում կքննարկի անցած տարվա աշխատանքները, կհաստատի գրասենյակի 2001 թ. ծրագիրը:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ԺԱ տարի

Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ

Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com

www.azg.am

Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635

Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221

Տնօրէն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353

Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483

Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353

Apple Macintosh
համակարգչային շարուածը
«Ազգ» թերթի

Յղումը «Ազգին» պարտադիր է

Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում

«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

տնտեսական

«Այնտեղ, որտեղ սկսվում է քաղաքականությունը, վերջանում է իրավաբանությունը»

ԱԺ իրավաբանական ծառայության պետ Վ. Նազարյանը ԲԷՑ-երի վաճառքը կասեցնելու սահմանադրական ճանապարհ չի տեսնում

«ԲԷՑ-երի վաճառքի մասին ԱԺ ընդունած օրենքը անօրինական է, քանի որ ընդունվել է 63 ձայնով, մինչդեռ պետք է ընդունված լիներ ԱԺ պատգամավորների ընդհանուր թվի մեծամասնությամբ, 66 ձայնով՝ ՀՀ Սահմանադրությանը համաձայնասխան»: Այս հայտարարությունը բազմիցս է հնչել վերջին մեկ-երկու շաբաթվա ընթացքում՝ ցանցերի վաճառքի մրցույթը կասեցնելուն ուղղված շարժմանը զուգահեռ: «Որքանո՞վ են ճիշտ օրենքի անօրինականության վերաբերյալ քաղաքական գործիչների պնդումները» հարցին ի պատասխան ԱԺ իրավաբանական ծառայության պետ Վլադիմիր Նազարյանը արտաբերեց մի-շատ հայտնի ճշմարտություն. «Այնտեղ, որտեղ սկսվում է քաղաքականությունը, վերջանում է իրավաբանությունը»: Իսկ այն հարցին, թե անցյալ տարի հուլիսի 29-ին օրենքի ընդունումից մոտ 9 ամիս հետո ընդդիմադիրների կողմից երբեւիցե եղե՞լ են «բացահայտ անօրինականորեն ընդունված», «Հայաստանի ազգային անվտանգությունը վտանգող» օրենքը, ինչպես գնահատում են ընդդիմադիրները, օրինական, սահմանադրական ճանապարհով լուծելու փորձեր, պրն Նազարյանը պատասխանեց, որ այդ մասին իրեն միայն վերջերս դիմել է ՀԺԿ նախագահ Ս. Պետիրճյանն, ինչն էլ առիթ է եղել ԱԺ գլխավոր իրաբվանին մեկ անգամ եւս թերթելու ՀՀ Սահմանադրության համաձայնասխան կետերը: Այսպիսով Սահմանադրության 71 հոդվածում թվարկված են այն բոլոր հարցերը, որոնց վերաբերյալ որոշումները պետք է ընդունվեն ոչ թե նիստին ներկա ԱԺ պատգամավորների ձայների մեծամասնությամբ, այլ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ (131-ից՝ 66): Դա վերաբերում է հետեւյալ հոդվածներին՝ 57, 58, 59, 72, 74, 84, 111, 79, 83, ինչպես նաեւ 75 հոդվածին, որը կարող է ինչ-որ ձեւով առնչվել վերոհիշյալ խնդրին: Այդ հոդվածի երրորդ կետում սեւով սպիտակի վրա գրված է. «Պետության եկամուտները նվազեցնող կամ ծախսերն ավելացնող օրենքների նախագծերը ԱԺ-ն քննարկում է միայն կառավարության եզրակացությամբ եւ ընդունվում են պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ»: Ըստ պրն Նազարյանի, տվյալ դեպքում կառավարության եզրակացություն չի եղել՝ պետության եկամուտները նվազեցնելու ու ծախսերն ավելացնելու վերաբերյալ: Ընդհանրապես, ըստ ԱԺ իրավաբանական ծառայության պետի, նման օրինակներ շատ կան, երբ ԱԺ են բերվում «պոպուլիստական օրենքներ», ասենք՝ 5 անգամ աշխատավարձերը բարձրացնելու մասին, եւ կառավարությունը տվել է իր համաձայնասխան եզրակացությունն, ու հարցը փակվել է: «Եթե անգամ չի եղել այդ եզրակացությունը, հնարավո՞ր է այս դեպքում տալ որեւէ հիմնավորում ու օրենքը վիճարկել ՀՀ ՍԴ-ում» հարցին պրն Նազարյանն իր հերթին տրամաբանական հարց տվեց. «Եթե մի բան վաճառում ես, ո՞նց կարող են քո եկամուտները պակասել»: Պրն Նազարյանը հարցի լուծման օրինական ճանապարհ, համենայն դեպս, չի տեսնում: Բայց եթե որեւէ մեկը կարող է բերել իրավաբանական ու տնտեսագիտական համոզիչ հիմնավորումներ, ինքը պատրաստ է նստել ու քննարկել դրանք, վերջում էլ խորհուրդ տալ՝ դիմել ՍԴ-ին:

Իսկ այն հարցը, թե ռազմավարակա՞ն են բաժիսիչ ցանցերը, թե՝ ոչ, պրն Նազարյանի կարծիքով, պնդողներն ու հերքողները, երկուսն էլ կարող են ճիշտ լինել, նայած թե ի՞նչ մոտեցում է ցուցաբերվում: Այդ նույն տրամաբանությամբ կարելի է հարցնել՝ «ռազմավարակա՞ն են արդյոք հացի գործարանները»: Ընդհանրապես, ըստ Վ. Նազարյանի, «ռազմավարություն» ասելով առաջին հերթին պետք է հասկանալ գաղափարախոսական գիծը, ասենք՝ պետությանից անցումը շուկայական տնտեսության: Որպես նախկին գլխավոր դատախազ, այլեւայլ պաշտոններ զբաղեցրած մարդ, ինքը երբեւէ չի հանդիպել ռազմավարական օբյեկտների ցանկին:

Այս եւ այլ բացատրություններից հետո ԱԺ իրավաբանական ծառայության պետը, որը հայտնի է իր բացախոսությամբ, առաջարկեց բոլորին հարգել՝ մեր երկրի օրենքները, այլապես՝ ամեն մի օրենք կարող է հայտնվել տեղատության: «Մենք երբեք չենք ունենա պետականություն, եթե ընդունենք որեւէ օրենք ու հետո փոշմանենք դրա համար»: Եթե օրենքը ընդունվել է, պետք է կատարվի: Ըստ Վ. Նազարյանի, նույնիսկ որեւէ օրենքին դեմ քվեարկողներն են մասնակցում այդ օրենքի ընդունմանը: Կոնկրետ ԲԷՑ-երի շուրջ ստեղծված աղմուկը պրն Նազարյանը համարում է ուշացած զայրույթ: Որպես ՀՀ քաղաքացի Վ. Նազարյանը ունի իր մտահոգիչ հարցերը, օրինակ. «Այդ ինչպե՞ս եղավ, որ էներգետիկ համակարգը թաղվեց պարտքերի տակ, շահույթով չի աշխատում: Ո՞նց եղավ, որ ընկավ կոռումպացված չինովնիկների ձեռքը»: Ըստ նրա, սեփականաշնորհել ԲԷՑ-երը, նշանակում է ոչ թե պետությունից օտարել դրանք, այլ կոռումպացված չինովնիկներից, որովհետեւ «նրանք տիրապետում են այդ ամբողջ գույքը, իրենցով են արել, եւ նրանք են առաջին հերթին շահագրգիռ դրանք չօտարելուն, որովհետեւ չեն ուզում զրկվել իրենց կթու կովից»: Աղմկողների մասին էլ Վ. Նազարյանն ունի իր կարծիքը. «Մարդիկ էմոցիաներով են ղեկավարվում հաճախ, գուցեեւ ազնիվ, բան չունեմ ասելու, գուցե դրա համար է այդ հարցը ցավ պատճառում նրանց»: Նրա անձնական կարծիքով, պետությունը սեփականատեր չպետք է լինի, նրա առաքելությունն է պաշտպանել երկրի անվտանգությունը, հասարակական կարգը, իր քաղաքացիների սեփականությունն ու ազատությունը եւ պետք է ունենա դրան համաձայնասխան գույք: Բայց պետությունը բիզնեսմեն չի կարող լինել, քանի որ մարդկության պատմությունն ապացուցել է, որ պետությունն ամենավատ բիզնես անողն է»:

ԱՐՄԵՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳԱՅԱՆԵ ՄՈՒՐՈՅԱՆ

Հ. Գ. Մեր կողմից տեղեկացնենք, որ, թերթելով ԲԷՑ-երի վաճառքի մասին օրենքի ընդունման վերաբերյալ մամուլի հրապարակումները (ինչն, ի դեպ, խորհուրդ ենք տալիս մյուսներին, քանի որ դրանք լույս են սփռում շատ ու շատ հարցերի վրա, նաեւ պատասխանում այն հարցին իսկապես ով ինչ դիրք է ունեցել ու որքա՞ն սկզբունքային է իր պայքարի մեջ-Գ. Մ.), պարզվում է, որ օրենքի երկրորդ ընթերցումը մի անգամ հետաձգվել է՝ ՀՀ վարչապետի գրավոր պատասխանի պատճառով. պատգամավորներ Արտաշես Գեղամյանի ու Հայկ Բաբուխանյանի հարցադնդմանը, թե՝ «արդյոք օրենքը չի՞ անդրադառնալու բյուջեում ծախսերի ավելացմանը», վարչապետի պատասխանը եղել է բացասական: Այսինքն կառավարության եզրակացությունն, այնուամենայնիվ, եղել է:

«Մակրոտնտեսական ցուցանիշները գերազանց են, բայց ինչո՞ւ ժողովրդի վիճակը չի լավանում»

Սկիզբը էջ 1

Ըստ ՀԲ հայաստանյան ներկայացուցչի, անցած տարիներին Հայաստանում գրանցվել են մակրոտնտեսական լավ ցուցանիշներ, որոնց մասին դրսում լսելով, կարելի է Հայաստանը պատկերացնել իբրեւ «երազի երկիր», բայց՝ «արդյոք մարդիկ այս երկրում զգո՞ւմ են դա»: «Ինչու այդ ցուցանիշները չեն անդրադառնում ժողովրդի կենսամակարդակի վրա», սա է ՀԲ սկզբունքային հարցն ուղղված ՀՀ կառավարությանը: Հայաստանում ՀԲ նախկին ռազմավարության մեջ գրեթե չեն եղել հատուկ կետեր՝ մասնավոր հատվածի զարգացման, պաշտպանության, ներդրումների աճի մասին, խոսքը հիմնականում գնացել է մակրոտնտեսական կայունության, մակրոտնտեսական աճի, սոցիալական պաշտպանվածության մասին: Այսօր դրանք արդեն կան, բայց բավարար չեն, հետեւաբար հաջորդ երեք տարիներին բանկի ռազմավարության հիմնական խնդիրն է լինելու մասնավոր ձեռներեցության ու ներդրումային միջավայրի բարելավումը: Սաադաթը խոսացավ, որ այսուհետեւ ավելի հաճախ կլինեն իրենց երկխոսությունները մասնավոր հատվածի հետ, ինչը պետք է խորհուրդ տան նաեւ կառավարությանը: Ընդհանրապես, դատելով բանկի ներկայացուցչի ելույթից, բանկն այսօր շատ խորհուրդներ ու առաջարկություններ ունի վերապահված երկրիս գործադիր իշխանությանը: Նաեւ ակնհայտ էր, որ բանկը աչալրջորեն հետեւում է այստեղ տեղի ունեցող ամեն ինչին եւ շատ բաներ գիտի, ինչը չի կարելի ասել նույնիսկ մեր երկրի կառավարության որոշ անդամների մասին:

«Մենք գիտենք, որ Հայաստանի հիմնական ուժը, հարստությունը նրա մարդկային կապիտալն է, բարձր մասնագիտական որակավորում ունեցող մարդիկ, որոնք էլ հենց կազմում են արտագաղթի հիմնական զանգվածը», ասաց պրն Սաադաթը: Պետք է կանխել այդ հոսքը, այլապես՝ «վաղն արդեն ուշ է լինելու»: «Աշխարհը շարժվում է շատ արագ արագությամբ, ապագան դառնում է ներկա, ներկան՝ արդեն անցյալ է: Ես կցանկանայի փոխանցել կառավարությանը, որ այս հարցի վերաբերյալ անհրաժեշտ են էական քայլեր», ասաց պրն Սաադաթը (որը լրագրողական շրջանակներում հայտնի է իր պերճախոսությամբ-Գ.Մ): Բանկը գիտի նաեւ, որ ՀԱԳՄ շատ ներկայացուցիչներ խորհրդարանական են, եւ որ ՀԱԳՄ-ն մեծ դերակատարություն է ունեցել սուղումների, պետական գնումների մասին օրենքներում:

«Եթե մենք ցանկանում ենք, որ Հայաստանն իր ներուժը հզորացնի, բոլոր բարելավումները պետք է շատ արագ կերպով կատարվեն, մասնավոր հատվածի առջեւ դրված բոլոր իրավական բարդությունները պետք է արագ վերացվեն», հստակեցվեց հետագա խոսքում: ՀԲ-ն արդեն մշակել է ու շուտով կառավարությանը կներկայացնի ՀՀ տնտեսության առաջնահերթ ոլորտների ցուցակը՝ ինֆորմացիոն տեխնոլոգիաներ, գյուղմթերքների վերամշակում, հայթեթ կամ բարձր տեխնոլոգիաներ, հանքարդյունաբերություն, ալմաստի հղկում, մի խոսքով՝ այն բնագավառները, որտեղ արդեն գրանցվել է առաջընթաց, սակայն՝ «շատ համեստ», հետեւաբար քայլեր են պետք, որ աճը այդ ոլորտներում ավելի շոշափելի դառնա:

ՀԲ-ն ամեն օր կառավարության հետ խոսում է բարելավումների մասին եւ ուրախ է, որ այնտեղ իրեն լսում են: Այդպես, ՁՀԳ-ի վերաբերյալ բավականին կոնկրետ առաջարկություններ են եղել՝ աշխատաոճի ու կառուցվածքի փոփոխությունների մասին: Եկող շաբաթ արդեն փոփոխություններն այդ կառույցում տեսանելի կլինեն:

Հայաստանի համար չափազանց մեծ նշանակություն պետք է ունենա նաեւ 2 ամիս հետո Նյու Յորքում կայանալիք համաժողովը, որից ակնկալիքները շատ մեծ են: Ժողովին հրավիրված է 500 մարդ: Անձամբ ՀԲ նախագահ Վոլֆենսոնն է մասնակցելու: «Գիտե՞ք ինչ, նա ամեն մի համաժողովի չի մասնակցում, անկեղծացավ պրն Սաադաթը, բայց այս դեպքում անձամբ է շահագրգիռ, քանի որ Հայաստանին առանձնահատուկ տեղ է տալիս, եւ այդ մասին խոսացել էր դեռ 1999 թ.-ի ամռանը իր հայաստանյան այցի ժամանակ»: Կարճ ասած՝ ՀԲ-ն կատարում է իր խոսքումները, ինչի մասին վստահ չէ հայկական կողմի առնչությամբ, հետեւաբար, աչքի առաջ ունենալով դա, բանկը մտահոգված է մի քանի հարցերով՝ ի՞նչ տեղի կունենա համաժողովից հետո, ո՞վ կպաշտպանի ներդնողների շահերը, ո՞վ արդյունավետ առաջ կտանի սկսված քայլերը եւ այլն:

«Այժմ ես կանդրադառնամ այսօրվա օրակարգի թեմային», ասաց պրն Սաադաթը եւ խնդրեց լրագրողներին լրել դահլիճը...

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԱՍՈՒԼԻՍ

«Հայկական ծրագրերի» նոր համակարգը «Կոնվերս բանկում»

Երեկ մի շարք լրատվամիջոցների ներկայացուցիչների հանդիպեցին «Կոնվերս բանկի» նախագահ Սմբատ Նասիբյանը եւ «Հայկական ծրագրեր» ընկերության տնօրեն Աշոտ Խաչատրյանը: Մինչ հանդիպման հիմնական հարցին անդրադառնալը, Սմբատ Նասիբյանը որոշ տեղեկություններ ներկայացրեց իր ղեկավարած բանկի 2000–2001 թթ. գործունեության վերաբերյալ:

«Կոնվերս բանկի» կապիտալը կազմում է 2,5 մլն դոլար: Հիմնադրման պահին (1993 թ.) կազմել է 100 հազար դոլար: Իր ակտիվներով բանկը Հայաստանում 5-րդն է, շահույթներով՝ 4-րդը: Բանկում աշխատում է 132 մարդ՝ 93 հազար դրամ միջին աշխատավարձով: 2000 թ.-ին պետքյուջե է վճարվել 106 մլն դրամ հարկ: «Կոնվերս բանկը» վարկային ռեսուրսներ է ստացել Համաշխարհային բանկից, Լինսի հիմնադրամից: Այս կառույցներից եւ գերմանական KfW հիմնադրամից նոր վարկերի ստացման հայտեր է ներկայացվել: Բանկից ֆինանսավորվող ոլորտներն են ավիացիան, տրանսպորտը, առեւտուրը, գյուղատնտեսությունը: Լինսի հիմնադրամից ստացված միջոցներից ֆինանսավորվող ծրագրերից Սմբատ Նասիբյանը հիշատակեց «Անդրե գրուպի» հետ տոմատի մածուկի արտադրության ծրագիրը (3,5 մլն դոլար արժողությամբ), որի շնորհիվ անցյալ տարի արտադրվել է 5 հազար տոննա տոմատի մածուկ: Բանկի առաջարկած ծառայությունների վերաբերյալ որոշ տվյալներ ներկայացնելուց հետո այստեղ ներդրված նոր համակարգի մասին մանրամասներ հաղորդելու համար խոսքը փոխանցվեց «Հայկական ծրագրերի» տնօրեն Աշոտ Խաչատրյանին: Վերջինս նշեց, որ իրենց ընկերության այսպես կոչված 2-րդ համակարգը ներդրված է Հայաստանի բանկերի 50 տոկոսում: Այժմ մշակվել եւ «Կոնվերս բանկում» ներդրվել է 3-րդ համակարգը: Այն նախորդից տարբերվում է նրանով, որ բացի հաշվապահական գործողություններից դյուրացումից, փաստորեն, կառավարում է ամբողջ բանկի գործունեությունը: Արձանագրում է բոլոր փաստաթղթերի շարժը, հնարավորություն է տալիս ավելի մեծ արագությամբ բանկային ծառայությունների նոր տեսակներ ավելացնել, արագ եւ որակով կատարել գործարքներ եւ այլն:

«Կոնվերս բանկը» 2-րդն էր, որտեղ ներդրվել է այս համակարգը, սակայն իրական գործունեության ծավալած բանկերից առաջինը: «Հայկական ծրագրերի» այս մշակումն արտերկրում կարժենա 200–300 հզ. դոլար, իսկ այստեղ՝ 50–60 հզ. դոլար: Բացի դրանից, պատվիրակությունների համար գրեթե 50 տոկոսի հասնող զեղչ է հնարավոր անել: Համակարգը սկսել է ներդրվել նաեւ «Հայնեռարտբանկում», իսկ այնուհետեւ, Աշոտ Խաչատրյանի կարծիքով, կիրառելու ցանկություն կունենան նաեւ մնացած բանկերը:

Հանդիպման վերջում լրագրողների եւ «Կոնվերս բանկի» նախագահի միջեւ զրույց ծավալվեց Հայաստանի բանկային համակարգի ներկա վիճակի վերաբերյալ: Սմբատ Նասիբյանի կարծիքով՝ բանկային համակարգում իրոք կան խնդիրներ: Ներկայումս առկա է դեպոզիտների աճ, սակայն չկան այդ միջոցները տեղաբաշխելու տեղերը: Այսինքն չկան լավ վարկառուներ: Իսկ մեր օրենսդրությունը եւ մասնավորապես դատական համակարգը ոչնչով չեն նպաստում համակարգի զարգացմանը: Օրինակ, վարկը չվերադարձնող կազմակերպության համար որեւէ պատիժ նախատեսված չէ: Ի տարբերություն Կենտրոնական բանկի նախագահ Տիգրան Սարգսյանի, Հայաստանի ֆոնդային բորսայի դիտորդ խորհրդի նախագահ Էդվարդ Սանդոյանի վերջերս արտահայտած այն կարծիքների, որ բանկային համակարգում վատթարացում չկա, «Կոնվերս բանկի» նախագահը նշեց, որ այժմ բանկերը համակարգչային ճգնաժամի մեջ են: Փողերը կան, բայց չգիտեն, թե որտեղ ներդնեն: Բացի այդ, «Կոնվերս բանկի» նախագահի կարծիքով, Հայաստանի համար 32 բանկերի առկայությունը անտրամաբանական է:

Մեր տնտեսության եւ շուկայի համար 5–6, առավելագույնը 10 բանկի գոյությունը բավարար է: «Ապագայում հավանաբար հենց այդպես էլ կլինի», եզրափակեց Սմբատ Նասիբյանը:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ազգային

Փորձություն

Սկիզբը էջ 1

Եթե այդ շրջանում նորընտիր նախագահի կամ նրա ղեկավարությամբ գործող «Քաղաքական խորհրդի» կողմից «նախկիններին» դատապարտող պաշտոնական հայտարարություն հնչեցվեր, արդա մի կողմից այն դրականորեն կընդունվեր հասարակության լայն զանգվածների կողմից (հայտնի է, երբ հաց չկա, մնում են տապարները...), մյուս դեպքում վերոհիշյալ քաղաքական կազմակերպությունները կլինեին բավարարված եւ նրանց կողմից չէր հնչի նախագահին հասցեագրված քննադատություն: Որքերտ Քոչարյանը նման կարգի հայտարարությամբ հանդես չեկավ: Ոմանք դա գնահատեցին որպես թուլության նշան: Իրականության մեջ պետք էր լինել ուժեղ եւ իրատես՝ հրաժարվելու ի վերջո երկրին ոչինչ չտվող, բայց զանգվածներին հրապուրող ծեւից, այդ շրջանում իրապես քաղաքականապես թույլ եւ բարոյապես պարտված «նախկիններին» որակավորումներ (թեկուզ արժանի) տալու գայթակղությունից: Սակայն նախագահի գործունեության առաջին իսկ շրջանում հանդես է գալիս պետության ղեկավարի համար բնորոշ մի այլ կարեւոր հատկանիշ. որպես երկրի զարգացման առաջնային նախապայման դիտարկել կայունությունը, պահպանելով սկզբունքները հիմնարար հարցերում, պատրաստ լինել փոխզիջման՝ կարեւորագույն հիմնախնդրի լուծման նպատակով: Մի կարեւոր հանգամանք եւս. Քոչարյանը հանրապետության նախագահի պաշտոնը ստանձնելուց հետո չհետաքրքրեց անձնական քաղաքական շահեր պաշտպանող խմբավորման ձեւավորումը, այսինքն կառավարման այն գործիքին, որի օգնությամբ վերջին տարիների ընթացքում իրականացվում էր երկրի ղեկավարումը նրա նախորդի կողմից:

Ժամանակը ցույց տվեց, որ «նախկիններին» գործողությունները ոչ թե պետք է արժանանային քաղաքական գնահատականի, այլ՝ քննադատության: Ի՞նչ քաղաքական գնահատականի մասին կարող է խոսք լինել ՀՀՇ ղեկավարների ձեւավորած զինյալ մարդասպանների խմբի վերաբերյալ, որն իրականացնում էր իրեն համար ոչ ընդունելի գործիչների ֆիզիկական վերացումը, եւ կամ պետական ունեցվածքի խոշոր հափշտակիչների եւ ժողովրդի կեղեքիչների նկատմամբ: Միմիայն քննական:

Պատմական հիշողությունը՝ իրատես արտաքին քաղաքականության պայման

Ելույթ ունենալով ՄԱԿ-ի գլխավոր ասամբլեայի 53-րդ նստաշրջանում՝ նախագահ Որքերտ Քոչարյանը նշեց. «Օսմանյան կայսրությունում հայերի 1915 թ. ցեղասպանությունն իր ժամանակին պատշաճ կերպով չդատապարտվեց համաշխարհային հանրության կողմից. ինչը որոշ վարչակարգերի խրախուսեց նոր հանցագործություններ կատարել: ...Այս չարիքի դեմ պայքարի անհրաժեշտության ըմբռնման վկայությունն են նաեւ ներկա դարասկզբին հայերի ցեղասպանության դատապարտումն ու ընդունումը մի շարք երկրների խորհրդարանների կողմից»: Փաստորեն, Հայոց ցեղասպանության ճանաչման անհրաժեշտությունն առաջին անգամ անկախության հռչակումից հետո բարձրացվեց պետության ղեկավարի կողմից Միավորված ազգերի կազմակերպության ամբիոնից:

Ինչո՞վ էր կարեւոր Քոչարյանի կողմից ցեղասպանության հարցի արծարծումը ՄԱԿ-ում: Առաջին՝ Հայաստանի ղեկավարությունն ի ցույց ամբողջ աշխարհի հայտարարեց, որ պետականորեն հարգում է իր ժողովրդի պատմական հիշողությունը եւ վճռականորեն հետաքրքրվելու է դարասկզբին տեղի ունեցած ողբերգության ճանաչումը: Երկրորդ՝ համաշխարհային հասարակության ուշադրությանն արժանացավ այն փաստը, որ տարածաշրջանում գերակայություն հետաքրքրող պետություններն իրենց քաղաքական նպատակներին հասնելու համար ընդունակ են դիմելու բոլոր միջոցներին, այդ թվում նաեւ ցեղասպանության: Երրորդ՝ ամբողջ աշխարհի հանրությանն ակնհայտ դարձավ, որ թե Հայաստանում եւ թե սփյուռքում առկա է միասնական ազգային մի հիմնախնդիր, որի հետաքրքրումը գտնվում է պետության արտաքին քաղաքականության ուշադրության կենտրոնում: Նախագահի ելույթից հետո ցեղասպանության փաստի ճանաչումը եւ քննարկումը մի շարք երկրների կողմից նաեւ արդյունք է սկզբունքային այն դիրքորոշման, որը որդեգրվեց Որքերտ Քոչարյանի կողմից:

Հայտնի է, որ նախկին իշխանությունների հեռացման դրդապատճառը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման շուրջ ծագած տարաձայնություններն էին: Պատահական չէ, որ այսօր էլ «նախկիններին» լրատվամիջոցներն առանձնահատուկ եռանդով փորձում են քննադատել Քոչարյան-Ալիեւ երկկողմ հանդիպումների ընթացքը, սանձբուլյան գագաթաժողովում ստորագրված փաստաթղթերը եւ անգամ կասարել անհնարը՝ հայ դիվանագիտության լիսաբոնյան ձախողումը ներկայացնել որպես ձեռքբերում, իսկ էությամբ պարտվողական՝ այսպես կոչված կարգավորման «փուլային» տարբերակը որպես արդյունավետ:

Իրականության մեջ նախագահ Քոչարյանին պահպանվող զինադադարի պայմաններում հաջողվեց Մինսկի խումբը կազմող պետությունների հովանավորությամբ հասնել կայուն բանակցային գործընթաց անմիջապես Ադրբեջանի հետ, այսինքն՝ բանակցությունները տարան առավել արդյունավետ ընթացք: Ընդ որում ի սկզբանե բարձրացվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը որպես բանակցությունների կողմ ճանաչելու հարցը:

Նախագահ Քոչարյանի հռչակած «կոմպլեմենտարիզմի» քաղաքականությունը ոմանք փորձում են ներկայացնել որպես հայ-ռուսական հարաբերություններին հակասող: Ի դեմ, նման պնդումների հեղինակները հենց այն շրջանակից են, որոնք 1990-92 թթ. Հայաստանում իրականացնում էին հակառուսական ձեռնարկումներ, հանդես գալիս ամեն ռուսականի դեմ: Իրականության մեջ կոմպլեմենտարիզմի քաղաքականությունը ոչ մի կերպ չի հակադրվում որոշակի նախապատվություններին միջպետական հարաբերությունների մեջ: Հայ-ռուսական ռազմավարական գործակցությունը վերջին երեք տարիների ընթացքում վերելք ապրեց, որի նոր արտահայտությունը կհանդիսանա 2001 թ. մայիսին Երեւանում կայանալիք կոլեկտիվ անվտանգության երկրների խորհրդի նիստը եւ այդ հանդիպման ընթացքում ստորագրվելիք փաստաթղթերը, ինչպես նաեւ աշնանը նախատեսվող Ռուսաստանի Դաշնության նախագահի պաշտոնական այցը Հայաստան: Վերջին երեք տարիների ընթացքում տնտեսական համագործակցությունը Ռուսաստանի Դաշնության հետ բոլոր ցուցանիշներով մի քանի անգամ գերազանցում է նախորդ ժամանակաշրջանի ցուցանիշներին:

Հոկտեմբերի 27-ից հետո

Հոկտեմբերի 27-ին Ազգային ժողովում տեղի ունեցած ոճրագործությունը հսկայական փորձություն էր թե ժողովրդի եւ թե նախագահի համար: Դաժանորեն կյանքից հեռացան մեծագույն ժողովրդականություն վայելող Կարեն Դեմիրճյանը եւ ազգային բանակի կարեւորագույն կազմակերպիչ, երկրի ուժային լծակներին տիրապետող Վազգեն Սարգսյանը: Հանրապետությունում հաստատվեց տագնապի եւ անվստահության մթնոլորտ: Անմիջապես աշխուժացան նախորդ իշխանության ներկայացուցիչները: Ողբերգության իսկ օրը նրանք հայտնվում են պաշտպանության նախարարությունում, ռազմական հեղաշրջում իրականացնելու հույսով:

Ստեղծված իրավիճակում նախագահ Որքերտ Քոչարյանը հանդես է բերում բացառիկ կամային հատկանիշներ, դրսեւորում պետական մտածելակերպ: Շնորհիվ Քոչարյանի, ստեղծված ճգնաժամային իրավիճակում երկիրը խուսափեց ներքին ցնցումից, որն աղետալի հետեւանքներ կունենար ազգային կյանքի բոլոր ոլորտներում: Ընտրվեց միակ ճիշտ ճանապարհը՝ շնորհիվ որոշ գիջումների հայտնի շրջանակներին, պահպանել պետության ներքին կայունությունը:

Հոկտեմբերի 27-ն ուղղակիորեն անդրադարձավ երկրի տնտեսական իրավիճակին: Ոչ միայն նվազեցին ներդրումները, վատթարացան տնտեսական ցուցանիշները, այլեւ մարդկանց մի սվար զանգված սկսեց զգալ իրեն ավելի անվստահ եւ անպաշտպան սեփական հողում:

Պատմությունը վկայում է՝ ժամանակը բուժում է բոլոր վերքերը: Հոկտեմբերի 27-ը կարող է այս կամ այն կերպ չկրկնվել միայն ճշմարտացի բացահայտման պարագայում: Պատահական չէ, որ նախագահը 27-ի ողբերգության օրն արեց ամեն հնարավորը, որ ոճրագործները կանգնեն դատարանի առջեւ:

1998 թ. նախագահական ընտրությունների շրջանում պատասխանելով «Սոբեսեդնիկի» թղթակցի հարցին՝ «Դուք լավատե՞ս եք, թե հոռետես», Որքերտ Քոչարյանն ասում է. «Իրատես»: Իրատեսություն, պատասխանատվության զգացում, կայացած որոշումն անշեղորեն կյանքի կոչել. հատկանիշներ, որոնց տիրապետում է նախագահ Քոչարյանը, եւ որոնք թույլ տվեցին դիմակայել եռամյա այս ժամանակաշրջանի բոլոր փորձություններին, հատկանիշներ, որոնք երաշխիք են մեր երկրի ու ժողովրդի առաջ ծառացող նորանոր փորձությունները դիմագրավելու:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ավետարանական եկեղեցու նախահարձակ քաղաքականությունը

Վտանգավոր լարանցում հոգեւոր դաշտում

Ընթերցելով հայաստանյան եւ սփյուռքահայ մամուլը, ուշադիր ընթերցողը կարող է նկատել, որ 2001 թ.-ին Հայ ավետարանական եկեղեցու սփյուռքահայ եւ Հայաստանի առաջնորդները փոխել են իրենց քարոզչական ռազմավարությունը՝ շրջանառության մեջ դնելով նոր տերմիններ ու գաղափարներ (վեր. դոկտոր Վահան Թութիկյանի «Նոր օր»-ում եւ վեր. Ռընե Լեւոնյանի «Պրոմեթեւս» հեռուստաընկերությամբ հարցազրույցները):

Նախ, մինչեւ 2000 թվականի վերջը նրանք ոչ մի անգամ իրենց հրապարակային ելույթներում միեւնույն շարքում չեն դասել Հայ առաքելական, Հայ ավետարանական, բողոքական եւ Հայ կաթողիկե (կաթոլիկ) եկեղեցիները, եթե խոսքը վերաբերել է Հայաստանի հոգեւոր կամ մշակութային կյանքին: Առիթ դարձնելով քրիստոնեությունը Հայաստանում որպես պետական կրոն հռչակելու 1700-ամյակը, Հայ ավետարանական եկեղեցու առաջնորդները հայտարարում են, որ 1700-ամյակի տոնակատարությունը «ոչ մեկ եկեղեցիի մենաշնորհը չէ, այլ բոլոր հայ եկեղեցիներու»: Իսկապես 1700-ամյակի տոնակատարությանը պետք է հրավիրվեն նաեւ այլ եկեղեցիների ներկայացուցիչներ, բայց...

Եթե այսուհետ Հայաստանում նույնպես օգտագործենք «հայ եկեղեցիներ» հասկացությունը, կնշանակի, որ այլեւս հաշվի չի առնվելու Հայ առաքելական եկեղեցու «սատուս քվոն» Հայաստանում: Շրջանառության մեջ է դրվում մի նոր գաղափար, ըստ որի 1700-ամյակը ոչ թե Հայ առաքելական եկեղեցու 1700-ամյա ծառայությունն է հայոց պետությանն ու հայ ազգին, այլ՝ ընդամենը քրիստոնեության մուտքը Հայաստան: Սա դատապարտելի գաղափար է: Ավետարանական եկեղեցու առաջնորդները «հայ եկեղեցիներ» ասելով նկատի ունեն Հայ առաքելական, Հայ ավետարանական եւ Հայ կաթողիկե եկեղեցիները: Շատ վտանգավոր փորձ է եւ ամբարտավանություն Հայ եկեղեցի անվանման մենաշնորհից զրկել Հայաստանյայց առաքելական մայր եկեղեցուն Հայաստանում: Իհարկե, ինչպես ասացինք, 1700-ամյակը պատրվակ է, սակայն իսկության մեջ այս բացահայտումով ազդարարվում է հայ ժողովրդի հոգեւոր կյանքի՝ այսինքն հավատի երկփեղկում եւ բաղադրում: Ի՞նչ հեռագնա ծրագիր է սա, ովքե՞ր եւ ի՞նչ ուժեր են կանգնած ավետարանականների թիկունքին: Այս մասին՝ այլ առիթով:

Հարգելով Հայ ավետարանական եւ Հայ կաթողիկե եկեղեցիների դավանանքը, պետք է կրկին հիշեցնել ու նշել, որ առաջինը ընդամենը 150 տարվա համաշխարհային բողոքական ուղղություն է, իսկ երկրորդը Հռոմի կաթոլիկ եկեղեցու հովանու տակ է: Օգտագործելով «հայ եկեղեցիներ» հասկացությունը, փորձ է արվում Հայաստանի հոգեւոր պատմության ու կրոնական կյանքում հավասարություն դնել իրենց եւ Հայ առաքելական եկեղեցու միջեւ, ինչն այսօր անպարկեշտություն է եւ անթույլատրելի:

Հայ ավետարանական եկեղեցին վերջին տարիներին Հայաստանում իր հզորացման համար որպես «ցատկահարթակ» օգտագործեց Հայ առաքելական եկեղեցու երեւելիների վստահությունը (ի դեմ, 2001 թ.-ին Հայ ավետարանական եկեղեցու առաջնորդներն այլեւս չեն անվանում Հայ առաքելական եկեղեցին Մայր եկեղեցի), կարողացավ ամրապնդել իր դիրքերը, պես-պես միջոցներով, քանի ու եռանդ չխնայելով հարաբերություններ հաստատել հանրապետության ղեկավարների հետ, անընդունելի ծանապարհներով կառուցել աղոթատներ, մշակութային կենտրոններ, դպրոցներ եւ այժմ, իրեն ուժեղ զգալով Հայաստանում, պահանջում է հավասար իրավունքներ Հայ առաքելական եկեղեցու հետ: Ժողովուրդը կասեր՝ «աղն է կերել մատաղը»: Չգիտես ինչու վերապատվելի Ռ. Լեւոնյանը հաճախ շահարկում է նաեւ Հայ կաթողիկե եկեղեցու անունը, մինչդեռ Հայ կաթողիկե եկեղեցու ներկայացուցիչներն առավել խոհեմ են եւ խուսափում են հրապարակային շինծու ելույթներից:

Եթե տարիներ շարունակ վեր. Ռ. Լեւոնյանն իր հեռուստաելույթներում միշտ ընդգծում էր Հայ առաքելական եկեղեցու ավագությունը Հայաստանում, ապա «Պրոմեթեւս» հեռուստաընկերության եթերում արդեն նշում է, որ քրիստոնեության 1700-ամյակի ոգեկոչումը պետք է իրականացնեն Հայ առաքելական, Հայ ավետարանական եւ Հայ կաթողիկե եկեղեցիները միասին:

Դեռ ավելին, նա նաեւ ստանձնում է աղանդների դեմ պայքարի գործը, երբ ավետարանականներից ոմանց ինչ լինելը մեզ համար պարզ ու հասկանալի չէ:

Վերը նշված հարցերում մեղքի իրենց բաժինն ունեն թե հայոց պետականությունը ներկայացնող այրերը, թե Առաքելական եկեղեցու հայրերը: 1700-ամյակն անվանեցին տոնակատարություն եւ այդպես էլ չկարողացան դուրս գալ այդ շրջանակներից: Արդեն 2001 թ.-ի գարունն է, իսկ զվարճանքի միջոցառումներից բացի ոչինչ չի արվել: Անհրաժեշտ էր սահմանել 1700-ամյա քրիստոնյա հայ ժողովրդի մշակութային, կրոնական, ազգային արժեքների դրույթները, որ հանրությանը մեկ անգամ եւս կներկայացվեն Հայ առաքելական մայր եկեղեցու դերն ու ծառայությունները: Այնուհետեւ պետությունը եւ Հայ առաքելական եկեղեցին հանդես կգային համատեղ հռչակագրով, որ 1700-ամյա եկեղեցին եւ տասնամյա պետությունը միասին պարելու եւ գործելու նոր ուխտ կանեին: Զարմանալի է, որ Հայ առաքելական եկեղեցու երեւելիները հրապարակավ գնահատական չեն տալիս վերը նշված իրականությանը, առավել եւս, որ մինչեւ օրս հասարակությունը տեղյակ չէ, թե ինչպիսի դիրքորոշում ունի Մայր աթոռը Հայ ավետարանական եկեղեցու նոր գործելաոճի նկատմամբ: Այսպիսի մի իրավիճակ եղել է նաեւ 19-րդ դարի վերջում: Հիշենք անցյալը, որ չմոլորվենք ապագայում...

Ս. ԳԻԲԱԿՈՍՅԱՆ

Գյուղացին լուրջ խնդրի առաջ է կանգնած

Գեղարքունիքում արդեն սկսվել են գարնան գյուղատնտեսական աշխատանքները: Սակայն այս տարին գյուղացին լիովին դատարկածեռն է դիմավորում: 2000 թ. ուժեղ երաշտը, որից տուժել էին մարզի բոլոր համայնքներն առանց բացառության, գյուղացուն թույլ չտվեց գոնե սերմացու ստանալ: Այսօր մարզում կա ավելի քան 7000 տ հացահատիկի սերմացուների պահանջ, որը, եթե չբավարարվի, 3 անգամ պակաս հացահատիկ կցանվի անցած տարվա համեմատությամբ: Անցած տարի ցանվել էր 27000 հա հացահատիկ:

Անցած մեկ շաբաթվա ընթացքում մարզում արդեն ցանվել է շուրջ 100 հա հացահատիկ նրանց կողմից, ովքեր համեմատաբար խոշոր հողատարածքներ են մշակում եւ անցած տարի կարողացել էին ինչ-որ չափով սերմացու ստանալ: Իսկ փոքր տնտեսություն վարող գյուղացու համար սերմացու ձեռք բերելն այսօր իսկապես լուրջ խնդիր է: Անցած տարվա երաշտի վնասները մեղմելու նպատակով սերմացուի ինչ-որ օգնություն սպասվում է, բայց թե երբ մարզ կներկրվի՝ հայտնի չէ:

Սերմացուն ուշանում է, իսկ բնությունն իր ժամանակներն է թելադրում՝ գյուղացուն ստիպելով դաշտ դուրս գալ սովորականից 15-20 օր շուտ: Մարզում գարնանացանը սովորաբար սկսվել է ապրիլի 5-ից, իսկ այս տարի՝ մարտի 15-ից:

ՏԻԳՐԱՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Գեղարքունիք

Միջազգային

ԱԴՐԲԵՋԱՆ

«Հ. Ալիեւը իշխանությունը որդուն փոխանցելու խնդիր է լուծում»

Բավում լույս տեսնող «Յուրիթեթ» պարբերականը մարտի 27-ի համարում «Ռուս համանախագահողը չի մեկնի Ֆլորիդա» վերնագրով հոդվածում՝ վկայակոչելով քաղաքական վերլուծաբան Ռասիմ Մուսաբաեւին, գրել է, թե «ԵԱՀԿ Մինսկի խմբի ռուսաստանյան համանախագահող Ն. Գրիբկովը չի մասնակցի Քի Վեսթում կայանալիք Քոչարյան-Ալիեւ բանակցություններին»: Այս իրավիճակում, գրում է թերթը, Ալիեւը ցանկանում է ԼՂ հարցի կարգավորումը Արեւմուտքի վերահսկողությունից հանձնել Ռուսաստանին, փոխարենը Մոսկվայի օգնությամբ լուծել իշխանությունը որդուն փոխանցելու խնդիրը: Ենթադրաբար, թերթի համար նման եզրահանգման հիմք է եղել Իլհամ Ալիեւի տեսակետը՝ կապված Ադրբեջանում ՆԱՏՕ-ի ուժեր տեղաբաշխելու հնարավորության հետ: «Ես դեմ եմ Ադրբեջանում ՆԱՏՕ-ի ուժեր տեղակայելու գաղափարին: Ադրբեջանը չպետք է դառնա ռազմական կոնֆրոնտացիայի մրցասպարեզ: Ռուսաստանը Հայաստանի վրա լուրջ ազդեցություն ունի, եւ Մոսկվայի ցանկության դեպքում ԼՂ կարգավորման գործընթացում կարձանագրվեն դրական արդյունքներ», ասել է Ի. Ալիեւը: «Հանուն իշխանությունը որդուն փոխանցելու, Հ. Ալիեւը պատրաստվում է զոհաբերել Ղարաբաղը», եզրակացնում է «Յուրիթեթը»:

«Ազգը» փորձեց ճշտել՝ արդյոք ԵԱՀԿ ՄԽ ռուս համանախագահող Գրիբկովը հրաժարվե՞լ է Քի Վեսթ մեկնել: ՀՀ-ում ՌԴ դեսպանատնից եւ ՀՀ ԱԳՆ-ից տեղեկացրին, որ նման ինֆորմացիա չունեն:

Չեչեն ահաբեկիչների համար Վրաստանն ավելի անվտանգ է, քան Ադրբեջանը

Անցյալ տարի չեչեն ահաբեկիչների գլխավոր առաջնորդներից Շամիլ Բասաեւը նամակով դիմեց Ադրբեջանի նախագահ Ալիեւին՝ հորդորելով վերջ տալ «Ադրբեջանում ապաստան գտած չեչեններին Ռուսաստանին հանձնելուն»: Ինչպես հայտնի է, Ալիեւը նախագահ Պուտինին դուր գալու նպատակով մի քանի չեչեն եւ դաղստանցի ահաբեկիչների, որոնք կասկածվում էին ահաբեկչական գործողություններ իրականացնելու մեջ եւ թաքնվում էին Ադրբեջանի տարածքում, հանձնեց ռուս իրավապահներին: Մոտ մեկ ամիս առաջ Բաքուն Մոսկվային հանձնեց հայտնի դաշտային հրամանատար Ռուսլան Ահմադովին, որը մեղադրվում է 43 սպանություններ, ահաբեկչական գործողություններ ու առեւանգումներ իրականացնելու մեջ:

Երեկ, ինչպես գրում է ադրբեջանական «էխո» թերթը, Հ. Ալիեւը ստացել է հերթական նամակը, այս անգամ Չեչնիայի առաջին նախագահ Ջոխար Դուդաեւի այրի Ալլա Դուդաեւայից, որը ներկա նախագահ Ասլան Մասխադովի հատուկ հանձնարարություններով գլխավոր ներկայացուցիչն է, եւ Ադրբեջանում Չեչնիայի նախկին փոխներկայացուցիչ Ռուսլան Աբդուրզակովից: Ուղերձի հեղինակները «Ադրբեջանում ապաստան գտած 10.000 չեչենների անունից Հ. Ալիեւին խնդրում են այլեւս չեչեններին չհանձնել ռուս իրավապահներին»: Նամակում հիշեցվում է, որ անձամբ Ալիեւը ՄԱԿ-ի ամբիոնից Ռուսաստանի գործողությունները Չեչնիայում որակել է ահաբեկչական, ուստի եւ՝«ինչո՞ւ եք այսօր չեչեններին հանձնում ահաբեկիչների պետությանը»:

Ադրբեջանական-չեչենական հարաբերությունները չափազանց լարված են: Բաքվում եւ Ադրբեջանի այլ բնակավայրերում սովորական են դարձել տեղացիների եւ չեչեն «փախստականների» ընդհարումները, որոնք երբեմն ավարտվում են փոխադարձ սպանություններով: Չեչեն դաշտային հրամանատար Արբի Բարաեւը, որն ահաբեկիչների շարքում համարվում է ամենադաժանը, անցնող շաբաթ հայտարարեց, որ «չեչեն մարտիկների համար Վրաստանն ավելի անվտանգ է, քան Ադրբեջանը»: Բարաեւը մեկ այլ դաշտային հրամանատարի՝ Ռեզվան Ահմադովի հետ ծրագրել է մոտ ժամանակներում գերի վերցնել արտասահմանցի լրագրողների՝ Ադրբեջանում ձերբակալված Ռուսլան Ահմադովի հետ փոխանակելու մտադրությամբ:

Ռուսական ԶԼՄ-ները նշում են, թե չեչեն ահաբեկիչների համար առավել անվտանգը ոչ Ադրբեջանն է, ոչ էլ Վրաստանը, այլ ԱՄՆ-ը, ավելի ստույգ՝ պետդեպարտամենտի շենքը, ուր վերջերս պաշտոնական ընդունելության արժանացավ «Մասխադովի կառավարության արտգործնախարար Իլյաս Ահմեդովը»:

Բուշի վարչակազմը դեռ որոնումների մեջ է

Յուքեր Վեդրինի բացահայտումները

Զորջ Բուշ կրտսերի պատշնակալությունից երկու ամիս անց Ֆրանսիայի արտգործնախարար Յուբեր Վեդրինի Վաշինգտոն կատարած այցը թույլ տվեց որոշ բացահայտումներ անել ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության վերաբերյալ: Մասնավորապես, Բուշի տարփողած «հատումն առայժմ չի կոնկրետացել, քանի որ, անշուշտ, հեռու է իրողություն լինելուց: Չնայած ընդհանուր ուղղությունների ուրվագծմանը, Սպիտակ տունը դեռ կոնկրետ որոշումներ չի ընդունել Իրաքի կամ Ռուսաստանի նկատմամբ իր վարելիք քաղաքականության վերաբերյալ: Վեդրինն իր այցի ընթացքում կահրթիռային վահանի» գաղափարին հավանություն չեն տալիս ոչ միայն օտարները, այլեւ ամերիկացի գործիչներից շատերը, բայց վերջիններս ստիպված են համակերպվել: Վեդրինը նշում է, որ Իրաքի խնդրին լուծում գտնելու ԱՄՆ-ի ջանքերին հավանություն են տալիս Ռուսաստանը, Ֆրանսիան, Չինաստանը, որոնք վաղուց հանդես են գալիս իրաքցի հասարակ ժողովրդին զրկանքներ պատճառող բեռնարգելքի վերացման օգտին:



Սակայն «Ֆիգարո» թերթն արձանագրում է Իրաքի հարցում Բուշի վարչակազմի բարձրաստիճան պատշնյաների միջեւ տիրող լուրջ տարաձայնությունները: Այսպես, պետքարտուղար Քոլին Փաուելը բեռնարգելքի վերացումն անհրաժեշտ է համարում քաղաքացիական օգտագործման ապրանքների հարցում ճկունություն մտցնելու նպատակով: Մինչդեռ ազգային անվտանգության գծով նախագահի խորհրդական Կոնդոլիզա Ռայսն առաջարկում է ընդունել ներկայումս ստեղծված ստատուս քվոն: Ի դեմ, Պենտագոնի բարձրաստիճան ներկայացուցիչ Փոլ Վոլֆովիցն օրերս եվրոպացի դիվանագետներին հայտարարեց, թե պետք չէ հալած յուղի տեղ ընդունել Իրաքի վերաբերյալ Փաուելի ասած խոսքերը: Հարց է ծագում. այդ դեպքում ո՞ւմ պետք է հավատալ:

Պաղեստինի եւ Բալկանների հարցում ԱՄՆ-ի հետ քաշվելու միտումն առայժմ չի կոնկրետացել, քանի որ, անշուշտ, հեռու է իրողություն լինելուց: Չնայած ընդհանուր ուղղությունների ուրվագծմանը, Սպիտակ տունը դեռ կոնկրետ որոշումներ չի ընդունել Իրաքի կամ Ռուսաստանի նկատմամբ իր վարելիք քաղաքականության վերաբերյալ: Վեդրինն իր այցի ընթացքում արձանագրեց, որ խոշոր վիհ է գոյացել Պենտագոնի ծուռակների եւ վարչակազմի չափավորականների միջեւ: Ճուռակներին գլխավորում է պաշտպանության նախարար, գերպահպանողական Դոնալդ Ռամսֆելդը, չափավորականներին՝ պետքարտուղար Քոլին Փաուելը: Վիճակը բարդանում է նրանով, որ այդ երկու անձանց նշանակած պաշտոնյաներից շատերին Կոնգրեսը դեռ չի հաստատել: Ամերիկացի բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը «Նյու Յորք թայմս» թերթում այս կապակցությամբ գրեց. «Հարկ կլինի, որ նախագահն ի վերջո պարզի, թե ինքն ինչպիսի արտաքին քաղաքականություն է վարելու: Այլապես նա չի կարողանա կողմնորոշվել բազմաթիվ կալու ներկայիս ճգնաժամը, թույլ չտալ, որ Մակեդոնիայի ալբանացի փոքրամասնությունը հայտնվի ծայրահեղականների ազդեցության տակ, խրախուսել Սկոպլեի երկխոսության ծավալումն ալբանացի չափավորական ղեկավարների հետ:

Նախկին Հարավսլավիայի տարածքում իրադրության հետագա սրում թույլ չտալու նպատակով Վեդրինն ամերիկացիներին առաջարկեց վերականգնել երբեմնի Շփման խումբը (ԱՄՆ, Ռուսաստան, Գերմանիա, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա), ինչպես նաեւ նշել Կոսովոյում ընտրությունների անցկացման կոնկրետ ժամկետներ:

Պ. Ք.

ՀԱՄԱՌՕՏ

Ադրբեջանի սահմանապահ զորքերի հրամանատարը պաշտոնաթող է արվել

ԲԱՔՈՒ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ադրբեջանի ազգային անվտանգության փոխնախարար, հանրապետության սահմանապահ զորքերի հրամանատար Աբասալի Նովրուզովն ազատվել է զբաղեցրած պաշտոնից:

Ինչպես լրագրողներին հայտնել են Ադրբեջանի նախագահի մամուլի ծառայությունում, համապատասխան կարգադրություն է ստորագրել նախագահ Հեյդար Ալիեւը: Նրա մեկ այլ կարգադրությամբ այդ պաշտոնում նշանակվել է էլչին Գուլիեւը, որը գլխավորում էր սահմանապահ զորքերի ստորաբաժանումներից մեկը:

Ավելի վաղ Աբասալի Նովրուզովը կառավարության նիստերից մեկի ժամանակ երկրի նախագահի կողմից խիստ քննադատության էր ենթարկվել մասնավորապես Բաքվի օդանավակայանում սահմանապահ ծառայության անբավարար աշխատանքի համար:

Կանադահարում Ուսամա բեն Լադենը հանդիպում է ունեցել իր կողմնակիցների հետ

ԻՍԼԱՄԱԲԱԴ, 28 ՄԱՐՏ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Միջազգային ահաբեկիչ Ուսամա բեն Լադենը իր կողմնակիցների հանդիպում է անցկացրել Աֆղանստանի Կանդահար քաղաքում, որտեղ գտնվում է «Թալիբան» շարժման կենտրոնակայանը: Խորհրդակցությանը ներկա են եղել բեն Լադենի առանձնապես վստահելի անձինք մի շարք արաբական երկրներից եւ Աֆղանստանից:

Ըստ որոշ տվյալների, բեն Լադենի կողմնակիցները փորձում են տիրել «Թալիբան» շարժման գլխավոր պաշտոններին:

ԱՄՄԱՆ

Միջարաբական հաշտությունների գագաթաժողով

Մարտի 27-ին Ամմանում մեկնարկեց արաբական երկօրյա գագաթաժողովը, որն առաջինն էր պարբերաբար կայանալու առումով: Եթե անցյալ հոկտեմբերին Կահիրեում տեղի ունեցած արտահերթ գագաթաժողովը ամբողջովին նվիրված էր պաղեստինյան ապստամբությանը, ապա Իրաք-Քուվեյթ հարցը կամա թե ակամա գերիշխող դարձավ Ամմանում: Այս հանգամանքն այնքան ակնհայտ էր, որ կարծես նույնիսկ որոշակի սվեր գցեց արաբ-իսրայելական հակամարտության հիմնախնդրի վրա, որը, ինչպես հաճախ, այնպես էլ հիմա, առաջնայիններից էր արաբ ղեկավարների օրակարգում: Հատկանշական է, որ Ամմանի միջոցառման օրակարգը նախապատրաստող արաբ ԱԳ նախարարները մարտի 25-27-ը չկարողացան ընդհանուր հայտարարի գալ Իրաք-Քուվեյթ վեճի կարգավորման վերաբերյալ, չնայած եռանդուն ջանքերին եւ միջնորդություններին: Այսպիսով, այս հարցի շուրջ միասնական որոշում ընդունելու խնդիրը ինքնըստինքյան փոխանցվեց արաբ առաջնորդներին:

Թեեւ մինչեւ մարտի 28-ի առավոտյան անորոշ էր այս հարցին վերաբերող որդեգրվելիք հավանական դիրքորոշումը, բայց նախորդ օրվա որոշ զարգացումներ վկայում են հնարավոր դրական ելքի մասին: Նախ, ելույթ ունեցած արաբ ղեկավարները անխիստ շեշտում էին միջարաբական անհապաղ հաշտության անհրաժեշտությունը, ինչն առաջին հերթին հասցեագրված է Բաղդադին եւ Քուվեյթին: Երկրորդ նկատելի երեւույթն այն էր, որ Իրաքի փոխնախագահ Իզզաթ Իբրահիմը եւ Քուվեյթի ԱԳ նախարար Սուբահ Ահմադ Սուբահը, որոնք ներկայացնում էին իրենց առաջնորդներին, որեւէ խոսքով չանդրադարձան իրենց երկրների միջեւ առկա հակամարտությանը, ինչն աննախադեպ է վերջին 10 տարում: Ավելին, Սուբահն անհրաժեշտ համարեց «արաբական շարքերի միացումը՝ ներկայիս զգայուն իրադրության պայմաններում»: Երրորդ ակնբախ դեպքը եղավ այն, որ Իզզաթ Իբրահիմն ու Սաուդյան Արաբիայի պաշտպանության նախարար Սուլթան իբն Աբդուլ Ազիզը ոչ միայն հանդիպել, այլեւ գրկախառնվել են: Գաղտնիք չէ, որ Ռիադը Քուվեյթի առաջին դաշնակիցն էր Բաղդադի դեմ 1990 թ. Ծոցի ճգնաժամից ի վեր:

Միջարաբական հաշտությունների ծիրում, Ամմանի գագաթաժողովի լուսանցքում, կարեւոր հանդիպում է կայացել նաեւ Սիրիայի նախագահ Բաշար Ասադի եւ պաղեստինյան առաջնորդ Յասեր Արաֆաթի միջեւ: Հայտնի է, որ Դամասկոսի հարաբերությունները խիստ լարվեցին Արաֆաթի հետ 1993 թ. Օսլոյում ձեռք բերված պաղեստինա-իսրայելական համաձայնագրերից հետո: Իսկ այդ կապերը բարելավելու համար Սիրիան պաղեստինյան ղեկավարությունից պահանջում էր որեւէ զիջում չկատարել Թել Ավիվին: Արդ, կարելի է արձանագրել, որ այսուհետ նոր էջ է բացվելու պաղեստինա-սիրիական հարաբերություններում, հատկապես որ նախագահ Ասադն իր ճառում խոստացավ բոլոր առումներով սատարել պաղեստինցիներին, եթե վերջիններս մինչեւ վերջ պայքարեն իրենց արդար իրավունքների համար:

ԱՆԴՐԱՆԻԿ ՄՈՎՍԵՍՅԱՆ

Մշակույթ

Ավարտելով մեկամսյա համերգային շրջագայությունը, Գերմանիայից վերադարձավ «Սերենադ» կամերային նվագախումբը:

«Հյուրախաղերն անցան բացառիկ հաջողությամբ: Ուրախաձո հանդիպումներ ունեցանք գերմանաբնակ մեր հայրենակիցների հետ, որոնք պատեհ առիթներում ջանք չխնայեցին եւ մեզ հավուր պատշաճի ընդունելու, եւ իրենց բարձր մակարդակով ներկայացնելու գերման հասարակության առջեւ: Խոսքս մասնավորապես վերաբերում է Քյոլնի հայկական առաքելական եկեղեցում տեղի ունեցած համերգին», պատմում է «Սերենադի» տնօրեն Դավիթ Թերզյանը: Ապա ասում է. «Թամար, դուք «Ազգ» օրաթերթում (15.02.2001) ուրվագծել էիք Գերմանիայում կայանալիք մեր հյուրախաղերի քարտեզը, նաեւ մանրազնին անդրադարձել էիք թե առաջիկա հյուրախաղերին, թե «Սերենադի» ստեղծագործական նկարագրին: Գերմանիայում մեր եղած ժամանակ թերթը տպագրեց նաեւ տեղեկություններ հյուրախաղերի ընթացքի մասին, որի համար հայտնում ենք **«Ազգին»** մեր շնորհակալությունը: Իսկ այսօր, երբ արդեն վերադարձել ենք, կարծում եմ, մեր համերգային շրջագայության լավագույն վկայությունները գերմանական մամուլում են, որը եւ հանձնում ենք Ձեզ ակնկալելով Ձեր թարգմանությունն ու լուսաբանումը»:

Ձեռքիս տակ «Westfalen-Blatt», «Jülicher Zeitung», «Neue Westfälische», «Evangel Zeitung» թերթերի հոդվածներն են «Սերենադ» կամերային նվագախմբի համերգներին արձագանքած գնահատականներով:

Մեկամսյա շրջագայության ընթացքում նվագախումբը հանդես է եկել մի շարք քաղաքներում, որոնց թվում են այնպիսի համբավանուն երաժշտական կենտրոններ, ինչպիսիք են Դրեզդենը, Քյոլնը, Ահենը, Հաննովերը... Նվագախմբի համերգներին մասնակցել են մեր ունկնդրին եւ ընթերցողին արդեն ծանոթ ավեյցարացի ջութակահարուհի Սիբիլլե Չոփփը, ջութակահար Գեւորգ Բուդաղյանը եւ Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախմբի գոսպահար Ալեքսանդր Սահակյանը: Լայնածիր եւ բազմաոճ էր «Սերենադ» Գերմանիայում հնչեցրած նվագացանկը, որն, աներկբայորեն, վկայում է միջազգային բեմում որպես լուրջ պրոֆեսիոնալ միավոր ներկայանալու նրա կարողությունը: Հիմնականում արեւմտաեվրոպական դասական երաժշտությունը ներկայացված էր Անտոնիո Վիվալդիի, Յոզեֆ Հայդնի, Յոհան Սեբաստիան Բախի, ռուսականը՝ Պյոտր Չայկովսկու, XX դարը Կարլ Ամադեուս Հարտմանի, Դմիտրի Շոստակովիչի, Ֆրանսիս Պուլենկի, հայ երաժշտությունը Կոմիտասի (Ասլամազյանի մշակմամբ), Էդվարդ Միրզոյանի, Տիգրան Մանսուրյանի ստեղծագործություններով:

Երաժշտական դարաշրջանների, ուղղությունների եւ ոճերի նման այլազանությունը բեւեռայնորեն հակադիր ալեկոծումների դաշտում է զորու է խորտակել եւ կամ հաղթանակորեն վերընծյուղել նրան, ով խիզախել է սուզվել այս բարդ օվկիանոսի մեջ: Հետամուտ լինելով «Սերենադ» նվագախմբի կատարողական վերընթացին (1995 թ., ստեղծման օրից) կարելի է հավաստել, որ գործ ունենք երջանիկ երկրորդ պարագայի հետ: Եվ, որպես հաստատումներից մեկը, անդրադառնանք մարտ ամսվա գերմանական պարբերական մամուլին:

«Բացառիկ կուռ ներդաշնակություն» հոդվածում, որի վերնագիրն ակնարկում է նվագախմբի անսամբլային համահնչեղությունը, մասնավորապես նշվում է. «Միջին Եվրոպայի բեմում Կովկասի հարավային փոքր երկրի երիտասարդ երաժիշտները ցուցաբերեցին բացառիկ ճշգրիտ ոճաբանություն, հրապուրեցին ոգեշունչ կատարումով, էնտուզիազմով, նվագախմբային ներքին կարգապահությամբ» (10.03.2001 թ.):

Նույն օրվա «Neue Westfälische» թերթը, հավաստելով «Սերենադի» կատարելության հասած նվագաոնը, գրում է. «Երիտասարդ դիրիժոր Էդուարդ Թոփչյանը հիանալի սինթեզում եւ միատարրորեն հնչեցնում է ստեղծագործությունների հնչունային համալիր կառույցը: Նրա մեկնաբանումները հմայում են, ստիպում ունկնդրել շունչը պահած, հափշտակված հոգեվիճակում...»:

Երաժշտագետ Հայնց Շոյերը «Westfalen-Blatt»-ում (11.03.2001) բնորոշում է Թոփչյանի նվագավարական ոճը որպես ազդեցիկ, տկուն, էներգիայով համակված, զերծ մեծածիր շարժումներից եւ արտաքին էֆեկտներ հետապնդող ժեստերից, սակայն այնքա՜ն խորաթափանց եւ արտահայտիչ, որ ստիպում է նվագախմբին արձագանքել դիրիժորի ամենափոքր իսկ արտաքին շարժմանը եւ ներքին իմպուլսին:

«Լուսավոր, պայծառ, կրակոտ եռանդով աչքի ընկավ Չայկովսկու հիանալի երկի «Սերենադի» կատարումը, իսկ Էդվարդ Միրզոյանի ստեղծագործությունը եւ Կոմիտասի հայկական մանրանվագները հակիրճ, բայց ազդեցիկ տպավորեցին հայ երաժշտության մեջ սինթեզված Արեւելքի եւ Արեւմուտքի ազդեցությունները: Սա Երեւանից Յուլիխեր ժամանած «Սերենադ» կամերային նվագախմբի փայլուն հաջողությունն է «եռանդով եւ երաժշտական նրբագեղությամբ» հոդվածում նշել է երաժշտագետ Հելգա Հերմանսը:

«Որպես երախտիք ծափերի տարափ ու ծաղիկների ծով» հոդվածով «Evangel Zeitung»-ը (18.03.2001) անդրադառնում է «Սերենադի» Հանովեր-Լիմմերի Ս. Նիկոլայ եկեղեցում կայացած համերգին: Հոդվածագիրն առավելապես կարեւորում է դիրիժոր Էդուարդ Թոփչյանի քարտաշնչ մեկնաբանումների գրավչությունը, նվագախմբի կատարողական վիրտուոզ նկարագիրը, տեխնիկական բացառիկ հնարավորությունները: Թերթը նշում է նաեւ, որ գերմանացի ունկնդրի վրա խոր տպավորություն թողեցին Էդվարդ Միրզոյանի «Վարիացիաների» կատարումը եւ, հատկապես, ծափողջույնների ու ծաղիկների տարափի դադարում հնչեցրած հայկական երկու մանրապատկերները»:

Անհրաժեշտ է նշել, որ գերմանական մամուլը միաձայն եւ չափազանց բարձր է գնահատում նաեւ ավեյցարացի երիտասարդ ջութակահարուհի Սիբիլլե Չոփփի արվեստը՝ բնորոշելով որպես փայլուն, վիրտուոզ, հնչունային առումով վառ եւ տպավորիչ:

Այսպիսին են Հայաստանի «Սերենադ» կամերային նվագախմբի մասին գերմանական մամուլում արձանագրված երաժշտական ճնշդատների կարծիքները: Բարձր նշանակության պրոֆեսիոնալ գնահատականներ, որոնք նոր եւ ուշագրավ էջեր գրեցին հայ երաժիշտ կատարողների տարեգրության մասյանում:

«Մեզ մնում է խորին շնորհակալություն հայտնել «British Airways» գործակալության ղեկավարությանը՝ «Սերենադի» ուղեւորությունը զգալի զեղչով ապահովելու համար», ասում է նվագախմբի տնօրեն Դավիթ Թերզյանը եւ հրավիրում է ամենին «Սերենադի» առաջիկա համերգներին:

ԹԱՄԱՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Արվեստագիտության թեկնածու

«Սերենադը» գերմանական մամուլի էջերում

NEUE WESTFÄLISHE NR. 59, SAMSTAG/SONNTAG, 10./11. MÄRZ 2001

WESTFALEN-BLATT 10./11. MÄRZ 2001

ՆՈՐ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ

«Միհր»

Այս անունն է կրում հայ-իրանական դարավոր առնչություններին նվիրված ժողովրդական պարբերականը, որն իրանական նոր տարվա՝ Նովրուզի նախօրյակին լույս տեսավ Երեւանում: Թերթը հրատարակվում է «Իրան-Նամէ» գիտական հանդեսի հավելվածի կարգավիճակով՝ հայ-իրանական մշակութային «Միհր» ակումբի կողմից՝ A-4 ֆորմատի 16 էջ ծավալով: Պարբերականի գլխավոր խմբագիրն է պատմական գիտությունների թեկնածու, քաղաքական մեկնաբան Մանուկ Մանուկյանը, պատասխանատու քարտուղարը՝ տիկինը Ծաղիկ Մարտիրոսյանը: Նրանք սեփական ուժերով վերջին տարիներին հրատարակում էին ներկայումս դադարած «Տարածաշրջան» թերթը՝ դեպի Իրան, Ռուսաստան, Չինաստան ու արաբական աշխարհ շեշտված կողմնորոշմամբ:

«Միհրի» անդրանիկ համարի՝ խմբագրության ստորագրած խոսքում ասվում է. «Միհր» հանդեսի նպատակն է Հայաստանի ընթերցողներին ներկայացնել Հայաստանի եւ Իրանի դարավոր մշակույթի լավագույն նմուշները: Ընթերցողներն այս հանդեսում կգտնեն Հայաստանի եւ Իրանի ժամանակակից գրականության, ճարտարապետության, քանդակագործության, երաժշտության, նկարչության, գիտության վերաբերյալ հետաքրքիր նյութեր: Չի մոռացվի նաեւ իրանահայ արվեստը, այդ երկրում այժմ ծաղկում ապրող հայ գրականությունն ու նկարչությունը: Առանձին հոդվածներ կնվիրվեն Իրանում զարգացող ճարտարապետությանը, մասնավորապես եկեղեցաշինությանը: «Խմբագրությունը կփորձի ընթերցողներին ներկայացնել երկու ժողովուրդների դարերից եկած եւ հավերժություն գնացող անխախտ բարեկամությունը, որը մեր օրերում ստացել է նաեւ «Հյուսիս-հարավ առանցք» քաղաքական ծեւակերպումը»:

«Միհրի» առաջին համարի նյութերից են Նովրուզին առնչված ժողովրդական ծեսերը ներկայացնող հոդվածը, պատառիկներ պարսիկ եւ հայ (նաեւ՝ իրանահայ) դասական ու ժամանակակից հեղինակների բանաստեղծություններից, Հովսեփ Օրբելու կազմակերպած իրանագիտության երրորդ կոնգրեսի մասին նյութը: Գլխավոր խմբագիրը ստորագրել է «Նոր թռիչք հայ-իրանական համագործակցության ոլորտում» հոդվածը, ուր նա թվարկում է հայ-իրանական առեւտրաշնչեսական տարբեր ծրագրեր: Հանդեսի գունավոր շապկի չորրորդ էջի վրա Իսպահանի շեյխ Լոթֆոլլայի ու Թեհրանի հայոց Ս. Սարգիս եկեղեցիների լուսանկարներն են, որոնց համատեղ արտատպումը խորհրդանշում է քաղաքակրթությունների եւ կրոնների անկեղծ երկխոսությունը՝ այլընտրանքը միօրինականացնող գլոբալիզացիան:

Իր հոդվածում Մ. Մանուկյանը գրում է, որ «Իրան-Հայաստան-Ռուսաստան առանցքն առավել առարկայանում է՝ ձեռք բերելով ռազմավարական նշանակություն»: Ամբողջովին համաձայն լինելով «Միհրի» խմբագրի այս մտքի հետ, մեր հերթին գտնում ենք, որ «Միհրի» ծնունդն էլ հենց այս ռազմավարական նշանակության դաշինքի արտահայտությունն է: «Միհրն» առայժմ լույս կտեսնի ամսական պարբերականությամբ. նախատեսված է մոտակա ամիսներին ամիսը երկու անգամ լույս ընծայել:

Գալուստդ բարի, Նովրուզ, եւ երթդ անխափան, «Միհր»:

ԳԵՎՈՐԳ ՅԱՀԱԲՅԱՆ

Երբ արթնանում է ազգայինը

Ռուսաստանի ՕՊՏ հեռուստատեսությամբ տրված շոուներից մեկի ժամանակ ցուցադրվեցին մոդելագործ Քրիստինե Հակոբյանի աշխատանքները: Ուշադրություն էր գրավում այն հանգամանքը, որ այսպես ասած ավանգարդիստական ոճով արված զգեստների մեջ աչքի էին զարնում ընդգծված հայկական երանգները:

Ինքնին այն փաստը, որ Ռուսաստանի առաջատար հեռուստատեսությամբ ներկայացվում է երիտասարդ հայուհու հավաքածուն, արդեն մեծ նվաճում է. այդ ասպարեզի ներքին խոհանոցին քիչ թե շատ ծանոթ մարդը լավ գիտի երեւույթի նշանակությունը: Առավել եւս, երբ պարզվում է, որ Հակոբյանի «թիկունքին» ոչ ոք կանգնած չէ, ինքն էլ «սովորական» ընտանիքից է, հայրը փաստաբան է, մայրը՝ ասեղնագործ (ի դեպ, Հայաստանում նշանավոր դարձած Դաբաղյանների տոհմից): Նաեւ առանձնում է, որ Քրիստինեն, ծնված ու մեծացած լինելով Կիսլովոդսկում, Հայաստանում եղել է սոսկ մասնավոր այցելություններով:

– Ստավրոպոլի մոդելագործության ուսումնարանն ավարտելուց հետո կատարելագործվել եմ Մոսկվայում՝ Սլավա Չայցեւի մոտ, ասում է Քրիստինեն: Մայրս ինձ միշտ խորհուրդ էր տալիս իմ ստեղծած զգեստների մեջ օգտագործել հայկական մոտիվներ, որոնք կոլորիտ հաղորդելով աշխատանքներին, դրանք կդարձնեն ինքնատիպ, ոչ ստանդարտ:

Քրիստինեն հասկանում է, որ դա դյուրին խնդիր չէ. ավանգարդն ու հայկականը զուգորդելը մեծ զգուշություն է պահանջում՝ նյութի իմացություն եւ համատեղման նուրբ զգացողություն: Նա լրջորեն ուսումնասիրում է հայկական տարազները, զգեստները, մանրանկարները եւ այլն: Այդ գործում նրան քաջալերում եւ անհրաժեշտ գրականությամբ ապահովում է հայ եկեղեցու տեղի թեմի առաջնորդ տեր Սարգիսը:

Քրիստինեն արդեն մասնակցել է Ռուսաստանի տարբեր քաղաքներում կազմակերպված նորաձեւության ցուցադրություններին: Նվիրական իղձ ունի՝ ներկայացնել իր աշխատանքները նախնյաց երկրում: Իսկ մինչ այդ պետք է այցելել Երեւան ու շրջագայել բանգարաններում:

Չի բացառվում, որ Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն ճանաչելու տոնակատարության օրերին նա երեւանցիներին մատուցի հայկական տարազների իր անդրանիկ հավաքածուն:

Հաջողություն մաղթենք Քրիստինեին:

ՌՈՒԲԵՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Մոսկվա

Հ. Գ. Մի դիտարկում. վերջին տարիների բեկումնային իրադարձություններից հետո Ռուսաստանի տարբեր վայրերում հանգրվանած հայաստանցի հայերը, որքան էլ վիրավորված, իրենց հետ բերում են նաեւ հայկական շունչը: Նրանք տեղի հայերի մեջ արթնացնում են այն ազգայինը, որը մթագնել էր կոմունիստական տասնամյակների ընթացքում: Քրիստինե Հակոբյանը դրա վկայությունն է. նրա շրջապատում շատ են հայաստանցիները:

ԱՍՏՂԵՐԻ ԿՅԱՆՔԻՑ

Ջենիֆեր Լոպեսն եւ Փաֆ Դեդի. ի՞նչն է կապում այս երկուսին

Արդեն մեկուկես տարի է, ինչ գեղեցկատես Ջենիֆեր Լոպեսին եւ խոովարար Փաֆ Դեդիին (իսկական անունը՝ Շոն Քոմբ) կարելի է միասին հանդիպել «ամենուրեք», նույնիսկ Մանհեթենի Գերագույն դատարանում, որտեղ Ջենիֆերին որպես վկա կանչել են թե մեղադրող, թե պաշտպանող կողմերը, իսկ մեղադրյալի աթոռին նստածը նույն ինքը՝ Փաֆ Դեդին է: Նրան մեղադրում են անօրեն զենք պահելու եւ կատաղության մեջ:

Դատավարությունն էլ ավելի խճճեց Լոպեսի եւ Դեդիի առանց այն էլ բարդ հարաբերությունները: Արդեն վաղուց լուրեր էին պտտվում, թե իբր նրանք բաժանվել են եւ Լոպեսի նոր կիրքն է «Սերը ոչինչ չարժե» (Love don't cost a thing) երգի տեսահոլովակում նկարահանված պարողը: Ճիշտ է, Լոպեսն անձամբ եւ իր ներկայացուցիչների միջոցով ժխտել է այդ խոսակցությունները՝ ասելով, որ ինքն ու Փաֆ Դեդին շարունակում են «մնալ միասին բոլոր առումներով», սակայն այլ աղբյուրներ հավաստիացնում են, որ այս զույգն արդեն կես տարի է գոյություն չունի: Պարզապես երգչուհին ցանկանում է բաժանվել՝ պահպանելով իր արժանապատվությունը, ինչը շատ դժվար է, երբ գործ ունես այնպիսի անհաշտ ու կովարար անձնավորության հետ, ինչպիսին նրա սիրեցյալն է:

ՋԱՐԻՆԵ ՍԱՖԱՐՅԱՆ

Մարզական

ՌԵՊՈՐՏԱԺ «ԲՐԻՏԻՇ ԷՐՈՒԵՅԶԻ» ԱՖԱԿԾՈՒԹՅԱՄԲ

Շախմատային կրթեր Մոնտե Կարլոյի խաղատան մոտ

Գագիկ Հովհաննիսյանը հաղորդում է Մոնակոյից

Այն նույն օրերին, երբ 16 նշանավոր գրոսմայստերներ Գարրի Կասպարովի գլխավորությամբ, Ֆրանսիայի Կաննի քաղաքում մասնակցում էին աշխարհի արագ շախմատի գավաթի խաղարկությանը, 12 այլ հանրաճանաչ շախմատիստներ Վիշվանաթան Անանդի եւ Վլադիմիր Կրամնիկի առաջնորդությամբ ընդամենը մի քանի տասնյակ կիլոմետր հեռավորության վրա, թեեւ այլ պետությունում՝ Մոնակոյում, շարունակում էին (եւ այժմ էլ դեռ շարունակում են) մրցվելը մեկ այլ անչափ հետաքրքիր մրցաշարում: Միանգամից ասեմ, որ մեկնաբանների մեծամասնության կարծիքով, տարբեր վարկածներով աշխարհի չեմպիոնի կոչումներ կրող Անանդն ու Կրամնիկը խուսափում են Կասպարովի հետ անմիջական մրցակցությունից: Ակնհայտորեն այդպես էր մի քանի շաբաթ առաջ Լինարեսում, ըստ ամենայնի այդպես է նաեւ այժմ, քանի որ Մոնակոյի մրցաշարը (ամեն դեպքում, ի տարբերություն Կաննի) պաշտոնական բնույթ չի կրում:

Եվ այսպես, ինչ է կատարվում Մոնտե Կարլոյի նշանավոր խաղատան հարեւանությամբ գտնվող «Մետրոպոլ Պալաս» հյուրանոցում, որտեղ արդեն 10-րդ անգամ ընթանում է «Ամբերի մեղեդիներ» ռոմանտիկ անունը կրող մրցաշարը: Գրոսմայստերները միմյանց հետ երկուական պարտիայից բաղկացած մրցախաղեր են անցկացնում. մեկը արագ (ինչպես Կաննում), մյուսը՝ «կույր» շախմատի (այսինքն՝ առանց խաղատախտակին նայելու) կանոններով: Այս ամենը յուրօրինակ է եւ գրավիչ, բայց մրցաստրահում հանդիսատեսների թիվը սպասվածից փոքր է: Նկատելի թիվ են կազմում մասնակիցների ուղեկիցները՝ հարազատներն ու մարտավարները: Անանդը, սովորականի նման, իր հնդկուհի տիկնոջ հետ է: Հունգարացի Պետեր Լեկոն եւս, թեեւ համեմատաբար նոր է ամուսնացել, բայց արդեն տասնյակ անգամ մրցաշարերին մասնակցել է իր հայուհի տիկնոջ՝ Սոֆյա Պետրոսյանի հետ: Մոնակոյում Լեկոյին ուղեկցում է նաեւ նրա աները՝ գրոսմայստեր Արշակ Պետրոսյանը, որը պաշտոնապես սկսել է կատարել Պետերի մարտավարի պարտականությունները:

Խաղատուն գրոսմայստերները, կարծես թե, փոքր են գնում: Համենայն դեպս, «հետախուզության» արդյունքներով, թղթախաղին ու պոչախաղին (ռուլետկա) այս օրերին նախապատվություն են տալիս այն գրոսմայստերները, (Կարպով, Պիկետ, Իվանչուկ, վան Վելի), որոնք շախմատային մրցաշարում գլխավոր մրցանակներին չեն հավակնում:

Ինը տուրից հետո առանձնապես հաջող է խաղում Կրամնիկը, որն առջեւում է եւ արագ շախմատում (6,5 միավոր), եւ «կույրում» (6,5, Թոփալովի հետ միասին) եւ ընդհանուր հաշվարկում (13): Թոփալովը 12,5 միավորով հաջորդում է առաջատարին: Բուլղարացի գրոսմայստերին երեկ հաջողվեց 1,5-0,5 հաշվով հաղթել Անանդին, եւ հնդիկ գրոսմայստերը, որը մինչ այդ համարյալ ընթանում էր Կրամնիկի հետ, միանգամից հայտնվեց երրորդ հորիզոնականում (11,5): Եվս մեկ նշանավոր շախմատիստ՝ Կարպովը, ցավոք, չի դիմանում լարվածությանը: Նա 7 միավորով բաժանում է նախավերջին՝ 11-րդ տեղը, միայն կես քայլով առաջ անցնելով եստոնահից՝ վան Վելիից:

Հինգշաբթի օրը կինչեն եզրափակիչը «Ամբերի մեղեդիները»...

ԳԵՂԱՍՍԱՀՔ

Ավարտեցին մրցաշրջանը

Կանադայի Վանկուվեր քաղաքում անցկացվեց գեղասահքի աշխարհի հերթական առաջնությունը: «Ջեներալ մոտորս» մարզահամալիրում ընթացած մրցումներում լարված պայքար էր ծավալվել բոլոր մրցաձեւերում:

Տղամարդկանց մենասահքերում հաղթողի կոչման հիմնական հավակնորդները ռուս գեղասահորդներ, աշխարհի եռակի չեմպիոն Ալեքսեյ Յագուդինն ու եվրոպայի կրկնակի չեմպիոն Եվգենի Պլյուշենկոն էին: Առավել վստահ էր 18-ամյա Պլյուշենկոն, որն էլ առաջին անգամ նվաճեց աշխարհի չեմպիոնի կոչումը: Յագուդինը, որը հանդես էր գալիս վնասվածքով, այս անգամ բավարարվեց արծաթե մեդալով: Բրոնզը բաժին հասավ ամերիկացի Թոդ Էլդրիջին:

Կանանց մրցապայքարում ուժեղագույնը Միշել Կվանն էր (ԱՄՆ): Վանկուվերում նա նվաճեց իր չորրորդ չեմպիոնական կոչումը: Ամերիկուհուց մի փոքր ետ մնաց երկրորդ մրցանակակիրը՝ եվրոպայի քառակի չեմպիոնուհի Իրինա Սլուցկայան (Ռուսաստան), իսկ բրոնզե մրցանակակիր դարձավ Սառա Հյուզը (ԱՄՆ):

Շատ գրավիչ էր նաեւ զույգերի մրցակցությունը:

Սպորտային զույգերի պայքարը փոքր-ինչ անսպասելի ավարտ ունեցավ: Կանադացիներ Ջեյմի Սելլը եւ Դավիդ Պելետյեն, օգտվելով հայրենակիցների (նաեւ որոշ չափով մրցավարների) աջակցությունից, դարձան աշխարհի չեմպիոններ: Նրանք իրենցից ետ թողեցին գլխավոր ֆավորիտներին՝ աշխարհի առաջնությունների կրկնակի հաղթողներ Ելենա Բերեժնայային եւ Անտոն Սիխարուլիձեին (Ռուսաստան), որոնք գրավեցին երկրորդ տեղը: Երրորդ տեղում է չինական Սյուե Շեն-Հոնբո Չժաո զույգը:

Այս մրցաձեւում հանդես էր գալիս նաեւ Հայաստանը ներկայացնող Մարիա Կրասիլցեւա-Արսյոմ Զնաչկով զույգը: Ցավոք, մեր երկրակը բավարարվեց բավական համեստ տեղով:

Պարային զույգերի մրցումներում հաղթեցին Բարբարա Ֆուզար-Պոլին եւ Մաուրիցիո Մարգալիոն (Իտալիա): Չեմպիոններին մի փոքր զիջեցին արծաթե մեդալակիրներ Մարինա Անիսինան եւ Գվենդալ Պեյզերան (Ֆրանսիա), իսկ բրոնզե մեդալակիրներ դարձան Իրինա Լոբաչովան եւ Իլյա Ավերբուխը (Ռուսաստան):

Մասնակիցներն ու մասնագետները այս առաջնությունը կարեւորում էին եկող տարի կայանալիք ձմեռային օլիմպիադայի տեսակետից: Պետք է կարծել, որ Սոլթ Լեյք Սիթիում պարգեւների հիմնական հավակնորդները կլինեն Վանկուվերում մրցանակային տեղեր գրաված մասնակիցները:

ԿՈՏԱՅՔ

Մարզական տնտեսությունը Աբովյանում

Գարնան գալու հետ Աբովյանում աստիճանաբար սկսում է աշխուժանալ նաեւ մարզական կյանքը: Օրերս քաղաքի պաշտպանա-մարզատեխնիկական դպրոցի տարածքում մեկնարկեց նախագիհնակոչիկային եւ զինակոչիկային տարիքի երիտասարդների բազմամարտի առաջնությունը, որը կազմակերպել էին «Սեւան» մարզական ընկերությունը, Կոտայքի մարզխորհուրդը, ՊՄՏԸ Կոտայքի տարածքային խորհուրդը, Աբովյանի քաղաքապետարանը եւ Կոտայքի տարածքային զինկոմիսարիատը:

Հանդիսավոր բացմանը մասնակիցներին ողջույնի խոսք հղեցին «Սեւան» ընկերության նախագահ Սուրեն Պոգոսյանը, պաշտպանա-մարզատեխնիկական ընկերության Կոտայքի տարածքային խորհրդի նախագահ Էդիկ Գրիգորյանը, միջոցառման գլխավոր հովանավոր, «Սեյրան եւ Սյոռոպա» ՍՊԸ հիմնադիր տնօրեն Սյոռոպա Եղիազարյանը, որոնք կարեւորեցին մարզված ու ֆիզիկապես կոփված զինակոչիկների դերն Ազգային բանակի հզորացման գործում:

Առաջնությանը մասնակցեցին տարածքի 21 հավաքական թիմեր, որոնցից 16-ը՝ միջնակարգ դպրոցներից, 2-ական՝ ՊՄՏԸ-ից, զորամասերից, մեկը՝ ուսումնարանից: Ծրագրում ընդգրկված մարզաձեւերն էին 100 մ վազք, նոնակի նետում, ձգումներ պտտածողի վրա, հրաձգություն, ծանրաքարի բարձրացում եւ փոխանցումավազք 4x100 մ:

Լարված պայքարում հաղթողների պատվանդանին կանգնեցին Հացավան գյուղից Գրիգոր Գրիգորյանը (վազք 100 մ), թիվ 55261 զորամասից Նարեկ Ավագյանը (ձգումներ պտտածողի վրա), Վարդան Սիմոնյանը (ծանրաքարի բարձրացում, Աբովյանի թիվ 3 դպրոց):

Նոնակի նետում ձեւում առաջին եւ երկրորդ տեղերը կիսեցին թիվ 95414 եւ 55261 զորամասերը, հրաձգության մրցությունում հաղթեց 95414 զորամասի թիմը, իսկ փոխանցումավազքում՝ Հացավան գյուղի միջնակարգ դպրոցը:

Թիմային հաշվարկով բազմամարտում հաղթող ճանաչվեց թիվ 55261 զորամասի հավաքականը, 2-րդ տեղը գրավեց ՊՄՏԸ դպրոցի 1-ին թիմը, 3-րդ տեղը՝ թիվ 2-րդ դպրոցը: Հաղթող թիմը պարգեւատրվեց գավաթներով եւ պատվոգրերով:

«Սեւան» մարզական ընկերությունը շնորհավորում է բոլոր մասնակիցներին եւ շնորհակալություն է հայտնում «Սեյրան եւ Սյոռոպա», «Արքուր Հովակիմյան» ՍՊԸ-ներին՝ հովանավորության համար:

ԼԻԱՆԱ ԲՈՒՆԻԱԹՅԱՆ

ՇԱՀԿՈՒ

Վաչիկ Մուրադյանը՝ Երեւանի չեմպիոն

Ավարտվեց միջազգային (100 վանդականոց) շահկու Երեւանի տղամարդկանց առաջնությունը: Չեմպիոնի կոչման եւ հանրապետական առաջնության ուղեգրերի համար պայքար մղեցին 16 մարզիկներ:

Շվեյցարական մրցակարգով, 7 տուրով անցկացված մրցումներում առաջին-երկրորդ տեղերը բաժանեցին Վաչիկ Մուրադյանն ու Կամո Ղուկասյանը, որոնք վաստակեցին 5,5-ական միավոր: Կանոնադրության համաձայն, չեմպիոնին որոշելու համար նրանց միջեւ կարճ ժամակարգով (յուրաքանչյուրին՝ 15 րոպե) լրացուցիչ խաղ անցկացվեց մինչեւ առաջին հաղթանակը: Առաջին իսկ պարտիայում հաղթելով՝ մայրաքաղաքի չեմպիոնի կոչումը նվաճեց Վաչիկ Մուրադյանը: Կամո Ղուկասյանը բավարարվեց երկրորդ տեղով, իսկ երրորդ տեղը գրավեց Ռուբեն Տերտերյանը:

Հանրապետական առաջնությանը, մրցանակակիրներից բացի, մասնակցելու իրավունք ստացավ նաեւ 4,5 միավորով չորրորդ տեղը գրաված Արամ Գրիգորյանը: Այդ մրցաշարը նախատեսվում է անցկացնել ապրիլի վերջին:

Մայրաքաղաքի տղամարդկանց առաջնությանը մասնակցեցին նաեւ գեղեցիկ սեռի երեք ներկայացուցիչներ: Նրանցից առավել հաջող հանդես եկավ Մարինե Սարգսյանը, որը 4 միավորով գրավեց վեցերորդ տեղը:

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹՅՈՒՆ

Ալինա Կաբաեւան կրկին առաջինն է

Աշխարհի ու Եվրոպայի եռակի չեմպիոնուհի Ալինա Կաբաեւան Սիդնեյի օլիմպիադայում անհաջողության մատնվեց (3-րդ տեղ), բայց նա կրկին ապացուցեց, որ իր մարզաձեւում ուժեղագույնն է: Լյուդվիգսբուրգում (Գերմանիա) անցկացված մրցումներում նա նախ հաղթեց բազմամարտում, ապա նաեւ առաջին տեղեր գրավեց ցատկապարանով, գնդակով, գուրզերով եւ օղակով վարժություններում: Հետաքրքիր է նշել, որ բոլոր չորս մրցաձեւերում երկրորդ տեղեր գրավեց ուկրաինուհի Տամարա Տիմոֆեեւան: Բազմամարտում երկրորդ մրցանակակիր դարձավ Կաբաեւայի թիմակցուհի Աննա Բեսսոնովան:

Բաժինը վարում է ՌԱՉՄԻԿ ԱՎԱԳՅԱՆԸ

ԽԱՉԲԱՌ

Նախորդ համարում տպագրված խաչբառի պատասխանները

Ուղղահայաց

1. Սուզակ: 2. Մանաս: 3. Պեղծանիկ: 4. Վառնա: 5. Նադիր: 7. Գավիթ: 8. Լազեր: 9. Բաղիա: 10. Աղտոր: 15. Արաբո: 16. Աղանդ: 17. Ավերֆ: 18. Ամիակ: 20. «Բուրան»: 21. Ավլոս: 24. Առյուծագի: 25. «Հոտոդ»: 26. Առլեն: 28. Ինարի: 29. Ամարա: 30. Խուրմա: 31. Իմբիր: 32. Անաբա: 33. «Ալիբի»:

Հորիզոնական

1. «Սալեմ»: 4. Վահան: 6. Արենա: 7. Գազել: 9. Բուդդա: 11. Արձան: 12. Կազուս: 13. Անդեր: 14. Թաղար: 17. Ամինա: 19. Արգար: 22. Համասեղ: 23. Ճիաուրելի: 25. Հորդա: 27. Քուռակ: 28. Ինեսա: 30. Խալդի: 32. Ազամա: 34. Մածուն: 35. Պարոն: 36. Իզիդա: 37. Ինգուշ: 38. Ալյուր: 39. Ալանի:



Ուղղահայաց

1. Վիլայեթ Թուրքիայում: 2. Նոյի կրտսեր որդին: 3. Կանացի անուն: 5. Սունդուկյանի «Խաթաբալայում» Զամբախովի ազգականը: 6. Պարսից թագավոր: 8. Մեկի հովանավորությամբ պաշտոն ստացած եւ նրա կամակատարը դարձած անձ: 9. Լիճ Ֆինլանդիայում: 10. Լեռ Հայաստանում: 12. Հոգեհացին համաժամասխանող ժողովրդական բառ: 15. Պիկասոյի ստեղծագործություններից: 17. Համով ուտելիք: 19. Ըստ դիցաբանության՝ ննջեցյալներին նավակով այն աշխարհ ուղեկցողը: 20. Ըստ Հովի. Թումանյանի, Թմուկ բերդի տերը: 21. Մարս մոլորակի արբանյակը: 22. Աշխարհի ուժեղագույն թենիսիստուհիներից: 27. Դագանակ, գավազան, ...: 29. Հայ դերասան, թատերական գործիչ, դրամատուրգ, ռեժիսոր: 31. Ղարաբաղյան պատերազմի հերոս: 32. Բնության զարթոնքի եղանակը: 34. Ութը տողից բաղկացած բանաստեղծական տուն: 36. Ալեքսեյ Տոլստոյի ֆանտաստիկ գիտագեղարվեստական վեպերից մեկի հերոսը: 39. Մակեդոնիայի ֆուտբոլի թիմը: 40. Լիճ Հայկական լեռնաշխարհում: 43. Մազ, վարս, ...:

Հորիզոնական

4. Ադրբեջանից գրավյալ բնակավայր: 7. Թունավոր օձ: 9. Բարձրագույն նոպատակ, որին ձգտում են մարդիկ: 11. Մրցաստարեզ: 13. Հայ դերասանուհի՝ ... Նովենց: 14. Գերմանացի փիլիսոփա: 16. Լերմոնտովի ստեղծագործություններից: 18. Հերոս «Սասունցի Դավիթ» էպոսում: 22. Ուս նկարիչ: 23. Նահանգ Մալայզիայում: 24. Ուղղաթեւ միջաս: 25. Հայաստանի մայրաքաղաքներից: 26. Խոնավություն, թացություն: 27. «Արհամարհանք» վեպի հեղինակը: 28. Ուսումնական հաստատություն: 30. Հեռուստացույցի մաս: 33. Դդմազգի պտուղ: 35. Հայաստանում գործող մշակութային կազմակերպություն: 37. Ավստրիացի գրող: 38. Ֆրիկի հայտնի քերթվածը՝ «Ընդդեմ ...ի»: 39. Հոլիվուդյան աստղ, դերասանուհի: 41. «Թալեյրան» վեպի հեղինակը: 42. Ոչխարների հոտ, ծիրի երամակ, կովերի ...: 44. Մեկ երկրի կողմից նվաճողական նպատակներ հետապնդող զինված հարձակում մեկ այլ երկրի վրա:

Կազմեց է. ԱՎԵՏԻՍՅԱՆԸ

ԱՄՆ դեսպանատանը պահանջվում է վարձով առանձնատուն, որի գտնվելու վայրը կլինի ոչ հեռու, քան 4 կմ հեռու ԱՄՆ դեսպանատնից:

Խնդրում ենք լրացնել սույն ձեւաթերթիկը եւ վերադարձնել ԱՄՆ դեսպանատուն, Բաղրամյան 18 հասցեով:
ATTN: GSO

1. Հասցեն _____
2. Պահանջվող _____ Վարձը _____
3. Վարձակալման ժամանակահատվածը (տարի) _____
4. Ննջարանների թիվը _____ Լոգասենյակների թիվը _____
5. Կա արդյոք ավտոտնակ _____ Բակ/Այգի _____
6. Քանի հարկանի է շենքը _____
7. Երբ կարող եք ազատել շենքը _____
8. Համաձայն եք հանել տնից ողջ կահույքը եւ անձնական իրերը _____
9. Տունը վերջերս է վերանորոգվել կամ վերակառուցվել. _____
Եթե ոչ, համաձայն եք արդյոք կատարել վերանորոգման աշխատանքներ, ԱՄՆ ստանդարտներին համաձայն, վարձակալելու նպատակով _____
10. Հեռախոս _____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ

առաջարկում է «Նոր Կտակարանի» նոր, շքեղ հրատարակություն, ընդամենը 1700 թվագրված օրինակով: Նաեւ հատուկ հրատարակություն՝ մկրտության եւ պսակադրության աստվածահաճո առիթներով նվիրելու համար:

Գրախանութի հասցեն՝ Խորենացի 43, «Այրարատ» կինոթատրոնի հարեւանությամբ, հեռախոս՝ 56-42-22

Ուշադրություն դարձրեք հյուրանոցների լողասենյակի նորոգմանը

ԿԵՐԱՄԻԿԱ

Միգուցե այստե՞ղ է Ձեր բիզնեսի հաջողությունը

«Կերամիկա» ընկերությունը հիսունհինգ տարի առաջ ստանձնելով հանրապետության 1700 ամյակին նվիրված տոնակատարությունների կազմակերպումը *հյուրանոցային* շինարարությամբ զբաղվող կազմակերպություններին *բացառիկ* հատուկ գներով առաջարկում է լողասենյակի նորոգման համար անհրաժեշտ ամբողջական տեսականի.

կերամիկական սալիկներ, կերամիկական գրանիտ, ծորակներ, սանիտարական կերամիկա, լոգարկղներ, կախովի աստիճաններ, հատուկ սոսինձներ, ջրատաքացուցիչներ, հայելիներ եվ հավելյալ պարագաներ

Դիմե՛ք մեզ, եւ մենք կանենք ամեն ինչ, որպեսզի կարողանաք ըստ պատշաճի ներկայանալ մեր հայրենակիցներին:

Հեռ. 61-63-00; Ֆաքս. 62-65-37; 52-94-49
E-mail: imex–m@mbox.intamet.com

LINK

ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ
«ՍԱՆԴԱՐՏ 2000»

Հաշվապահության բոլոր բաժինների ավտոմատացում.
Արտադրություն եւ առեւտուր
Բանկ եւ դրամարկղ
Աշխատավարձ եւ կադրեր
Պահեստի շարժ
Հաշվարկներ գնորդների հետ
Հաշվարկներ մատակարարների հետ
Հիմնական միջոցների հաշվառում...

Փաստաթղթերի գրանցում, պահպանում եւ տպագրում.
Հաշիվ-ֆակտուրաներ
Դրամարկղային օրդերներ
Աշխատավարձի տեղեկագրեր
Պահանջագրեր...

Հաշվետվությունների ձեւավորում.
Շրջանառության եւ մնացորդի ամփոփագիր
Գլխավոր գիրք
Շախմատ-տեղեկագիր...

Ծրագիրը մշակված է "1C: БУХГАЛТЕРИЯ" համակարգի հիման վրա

Աշխատում է նոր եւ հին հաշվային պլաններով
Ավտոմատ ձեւավորում է գրառումներ
Աշխատում է հայերեն եւ անգլերեն լեզուներով
Համատեղելի է Windows համակարգի հետ

Երեւան, Կոմիտասի պող. 49, հեռ. 23-05-10
E-mail: link@lans.am
http://www.link.am

HUJ

1965 թ. գործող Հայաստանի ուսանողական ջոկատների հանրապետական շտաբը, որը ՅՈՒՆԵՍԿՕ-ի կամավորական ծառայության կոմիտեի անդամ է, հրավիրում է որպես կամավորական մասնակցելու արտասահմանում եւ Հայաստանում միջազգային աշխատանքի ճամբարների ամառային ծրագրերին:

Պայմանները՝ *անգլերենի (ֆրանսերեն, գերմաներեն) տիրապետում, կամավորականի անդամավճար եւ ուղեվարձի վճարման հնարավորություն*

Դիմումներն ընդունվում են հետեւյալ հասցեով՝
Կորյունի 19ա, 7-րդ հարկ, հեռ.՝ 52 27 88, 52 27 01

YEREVAN-PARIS-LYON
SABERATOURS-SEVAN
ՍԱԲԵՐԱՏՈՒՐ–ՍԵՎԱՆ
ԵՐԵՎԱՆ-ՓԱՐԻԶ-ԼԻՈՆ

Ավիատոմսեր եւ տուրիզմ

«Սաբերատուր-Սեւան»
ճամփորդական գործակալությունն առաջարկում է.

- *Ավիատոմսեր Երեւանից ուղիղ չվերթերով*

ARMENIAN AIRLINES swissair KLM BRITISH AIRWAYS АЭРОФЛОТ

տրանզիտ թաղամներով ցանկացած ուղղությամբ եւ ընկերությամբ: Փարիզի օդանավակայանում Ձեզ կդիմավորի մեր գրասենյակի ներկայացուցիչը եւ կհոգա Ձեր բոլոր հոգսերը՝

- *Գնացքի տոմսեր Եվրոպայում*
- *Հյուրանոցների ամրագրում Հայաստանում եւ արտասահմանում*
- *Բժշկական ապահովագրություն*

375010, ք. Երեւան, Վարդանանց 10
Հեռ. (3741) 52 54 48, 52 85 48, ֆաքս (3741) 56 40 30
E-mail: sabera@arminco.com

CRS®

USAID

ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«Կաթողիկե օգնության ծառայություն» միջազգային ոչ կառավարական կազմակերպությունը (CRS) իր իրականացնող գործընկերոջ՝ Հայկական Կարիտասի հետ համատեղ սկսում է «Դպրոցների սնուցման ծրագիրը» «Սոցիալական վերափոխման» ծրագրի շրջանակներում Գավառի եւ Ճամբարակի շրջանների 6 դպրոցներում, «Միացյալ Նահանգների միջազգային զարգացման գործակալության» (USAID) հովանավորությամբ: Ծրագրի շրջանակներում կատարվելու է դպրոցական ճաշարանների վերանորոգում:

Շինարարական նյութերի ձեռքբերման եւ տեղափոխման համար հայտարարվում է մրցույթ, ընդամենը 40000 ԱՄՆ դոլար արժողությամբ:

Մրցույթին մասնակցել ցանկացող կազմակերպությունները մրցույթի փաթեթը ստանալու համար կարող են դիմել «Կաթողիկե օգնության ծառայության» հայաստանյան գրասենյակ՝ սկսած 2001 թ. ապրիլի 2-ից, ժամը 12-ից:

Լրացված փաթեթների ընդունման վերջնաժամկետն է ապրիլի 5-ը, մինչեւ 17:00:

Մանրամասներին ծանոթանալու համար խնդրվում է դիմել՝ «Կաթողիկե օգնության ծառայության» հայաստանյան գրասենյակ, ք. Երեւան, Չորագյուղ, Ազգագրական 13/14, հեռ.՝ 58-34-03, 52-74-63, ֆաքս՝ 151 524, էլ-փոստ՝ **christina@crs.am** կամ՝

Կարիտասի հայաստանյան գրասենյակի Գեղարքունիքի մասնաճյուղ, ք. Գավառ, Բոնաղյան 19, հեռ.՝ (064) 2-21-76:

Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախումբ

ՀԱՄԵՐԳ

Մարտի 30-ին, ժամը 19:00-ին, Արամ Խաչատրյան համերգասրահում կկայանա Հայաստանի ֆիլհարմոնիկ նվագախմբի համերգը՝ Էդուարդ Թոփչյանի ղեկավարությամբ:

Համերգին կհնչի Չայկովսկու 6-րդ սիմֆոնիան, ինչպես նաեւ արիաներ Վերդիի եւ Պուչինիի օպերաներից:

Մենակատարներ
Լուսինե Մարկոսյան (սոպրանո)
Հովհաննես Նազարյան (տենոր)

Գեղարվեստական եւ գլխավոր դիրիժոր
Էդուարդ Թոփչյան

ՀՖՆ-ի 2000/2001 թթ. համերգաշրջանի հովանավոր՝ AGBU-Հայկական բարեգործական ընդհանուր միություն

ОБЪЯВЛЕНИЕ
ДЕТСКАЯ КОМПЬЮТЕРНАЯ ШКОЛА ЮНЕСКО
продолжает набор
принимаются дети в возрасте от 12 до 16 лет;
Окончившие получают Свидетельство государственного образца;
занятия два раза в неделю по 2 академических часа;
обучение платное (1 месяц - 4000 драмов);
начала занятий - с 2 апреля 2001 г.;
наш адрес: г. Ереван, Мамиконянц (бывшая Фурманова) 52,
тел. 25 20 86, 23 29 08

ԼՈՒԵԱՐՎՈՒՄ է

Ա. Վարդանյանի «ԱՐՄԵՆ» անհատական ձեռնարկությունը, գրանցման վկայականը՝ N038383, գրանցման համարը՝ 282.020.02960, ամսաթիվը՝ 10.11.1997 թ., ձեռնարկության կոդը՝ 37389412:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկը հայտարարում է 2001 թ. թողարկվելիք հուշադրամների էսքիզների մրցույթ:

Հուշադրամները թողարկվելու են հետեւյալ թեմաներով եւ պարտադիր պայմաններով.

1. **Նվիրված Հայոց պետականության 10-ամյակին**
   Տրամագիծը-63,0 մմ
   Անվանական արժեքը-500 դրամ
   Թողարկման տարեթիվը-2001
   Դիմերեսը-ՀՀ զինանշանը «Հայաստանի Հանրապետություն» գրառումով
   Դարձերեսը-«Հայոց պետականություն» գրառումով
2. **Նվիրված Հայաստանի Հանրապետության Եվրախորհրդին անդամակցելուն**
   Տրամագիծը-38,0 մմ
   Անվանական արժեքը-100 դրամ
   Թողարկման տարեթիվը-2001
   Դիմերեսը-ՀՀ զինանշանը «Հայաստանի Հանրապետություն» գրառումով
3. **Նվիրված Գարեգին Նժդեհին**
   Տրամագիծը-38,0 մմ
   Անվանական արժեքը-100 դրամ
   Թողարկման տարեթիվը-2001
   Դիմերեսը-ՀՀ զինանշանը «Հայաստանի Հանրապետություն» գրառումով

Հուշադրամների դարձերեսների ձեւավորման առաջարկները ներկայացվում են մրցույթի մասնակիցների կողմից:

Պարգեւատրման չափերը

Յուրաքանչյուր հուշադրամի էսքիզների (դիմերես, դարձերես) համար սահմանվում է մեկ մրցանակ-100.000 (հարյուր հազար) դրամ:

Էսքիզները պետք է ներկայացվեն Կենտրոնական բանկ մինչեւ 2001 թ. ապրիլի 20-ը, ժամը 12:00:

Լրացուցիչ տեղեկությունների համար դիմել ՀՀ ԿԲ-ի դրամագիտական բաժին Երեւան, Վազգեն Սարգսյանի 8 հասցեով, հեռ. 56-16-01:

ԿԲ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ

@rmineo Global Telecommunications **Ինտերնետ ծառայություններ «ԻՆՏԵՐՆԵՏ» սրճարանում: Խանջյան 50: Հեռ. 575823:**

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունյաց 70ա Գրանցման թիւ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 28. 03. 2001 Գինը՝ 100 դրամ